Ժ· ՏԱՐԻ 2754 — ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 2 Ա.ՀԵԿԱՆ 4385 — 9 ԱՊՐԻԼ 1893 — 4 ՇԷՎՎԱԼ 1310 — ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Կ. Պոլիս

درعلیه‌ده غلطه‌ده آره‌ولك غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
Քաղաքական եւ Ազգային

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան [illegible]	150
» » [illegible] »	75
» » [illegible] »	40
Օտար երկիրներ [illegible]	56
» [illegible]	28
Ընծիր թուղթի [illegible] Տարեկան Օսմ. Ոսկի	2
Գաւառաց թղթ[illegible]	Ղուշ 50

Խմբագրութիւնը [illegible] ղրկուած նամակ կամ այլ գրութիւն ետ չի տրուիր։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 9/21 ԱՊՐԻԼ 1893

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆՔ

ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆՑ

Արժ. Տ. Գիւտ քահանայ Աղանեանց պատիւ ըրեր է մեզ ղրկելու իր խմբագրած «Դիւան Պատմութեան» հաւաքածոյին առաջին հատորն, երկու մասի բաժնուած։ Մեծադիր երկիւջեայ 322 երես, գեղեցիկ տպագրութեամբ հրատարակութիւն մ'է այս, որ Սահակ-Մեսրոպեան մրցանակի արժանացաւ։ Տփղիսի անուանի քահանայն եզական առիթներ ունեցած է պաշտօնարաններէ քաղելու կարեւոր թուղթեր եւ տեղեկութիւններ անցեալ դարու վերջի եւ դարուս սկզբան (1780-1834) կաթողիկոսաց գործերուն վրայ, Պալաժենիոյ յօրինման, Սինոդի եւ կաթողիկոսի յարաբերութեանց վրայ, լուսաւորելով շատ մը մութ կէտեր, եւ ուրեք ուրեք բոլորովին նոր կերպարան մը տալով գործերուն։ Գրքին ճակատը դրած է Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսին շատ յաջող կենդանագիրն։ Իր յառաջաբանին մէջ իրաւամբ դիտել կուտայ թէ ազգային մէջ բնատոհմիկ հնախօսութիւն գրել կարենալու համար, ներկային մէջ անոնց նիւթերը կորստեան վտանգէ ազատելու եւ տեսակին համեմատ ամփոփելու է հաւաքածոյներու մէջ. եւ թէ առանց այսպիսի հաւաքածոյներու՝ չիք ճշմարիտ պատմագրութիւն, ինչպէս կը պահանջեն այժմեան գիտութիւնն եւ քննական մեթոտ։ Թէեւ այս հրատարակութիւն չունի «Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի» անուն ռուսահայ հանրածանօթ երկասիրութեան պատմագրական առաւելութիւնն ու կանոնաւորութիւնը, բայց իր համեստ շրջանակին մէջ ոչ նուազ շահագրգիռ է, եւ պատեհ առթիւ կը յուսամք թէ պիտի կարենանք աւելի մանրամասնօրէն խօսիլ անոր պարունակութեանց վրայ։ Սահակ-Մեսրոպեան մրցանակի յանձնաժողովը շատ լաւ ընտրութիւն ըրած էր տարեկան մրցանակին կէսն յատկացնելով Արժ. Աղանեանց քահանայի գործին, որ տեսակին մէջ շահագրգիռ նորութիւններէն մին է, արժանի քաջալերութեան։ Ոչ միայն գործն, այլ եւ գործիչն ուշագրաւ է։ Արժ. Գիւտ քահանայ մեր դրական ասպարէզին մէջ սակաւաթիւ փորձառեայ եկեղեցականներէն է, որ թարգմանութեանց եւ հեղինակութեանց երկար շարք մ'ունի, ամենքն ալ բարոյական, իմացական եւ հոգեւոր շինութեան օգտակար գործեր, որով արեւելեան Հայոց մէջ կը վայելէ արժանաւոր համբաւ։ Հմուտ եւ քննասէր միտքի մը հետ օժտեալ է մաքուր հայերէնով մը, զերծ կարգ մը ռուսահայ գրիչներու խորթ օտարաբանութիւններէն, վճիտ եւ պայծառ աշխարհաբար մը, ճիշդ ինչպէս կրնայ եւ պարտի ըլլալ արեւելեան աշխարհաբարն։ Յանձնաժողովոյ Ատեն. Նախագահին եւ Գեր. տեղեկաբերին (Իզմիրլեան Սրբազան) խնդակցութիւններէն ետքը, մեք եւս գործն հրատարակեալ տեսնելով՝ կրնանք շնորհաւորել ուշիմ եւ աշխատասէր հեղինակն, յուսալով որ իր անունն եւ հեղինակութիւնք այսուհետեւ աւելի ճանչուին Արեւմտեան Հայոց մէջ։

ԿԵՍԱՐԻԱ

Այս ձմեռ շատ խիստ եղաւ ամեն կողմ, բայց Կեսարիոյ մէջ համեմատաբար թեթեւ անցաւ։ Մինչ շրջակայ գաւառները ձիւնով եւ սառոյցով կը պատէին ու բնակիչք կը դողդողային, Կեսարիա բաղդաւորապէս անփաս կ'ելնէր ձմրան խստութենէն։

Կեսարիայէն գրուած նամակներ գոհունակութեամբ կը յիշեն հաղորդակցութեանց բարւոքումն, որով Կ. Պոլսոյ եւ արեւմտեան Եւրոպիոյ հետ առեւտրական յարաբերութիւնք աւելի շուտ եւ կանոնաւորապէս կը կատարուին։ Այս բարւոքում արդիւնք է Էնկիւրիի երկաթուղւոյ գծին բացման, եւ Էնկիւրիէ ի Կեսարիա թղթատարական ճամբուն թեթեւ բարեփոխման։ Յառաջագոյն շաբաթ օր մը Կ. Պոլսէ գրուած նամակը նոյն երկուշաբթի չէ միւս երկու շաբթին կը հասնէր Կեսարիա։ Հիմա երեքշաբթի օրուան նամակն յաջորդ կիրակին կը հասնի հոն։ Կ. Պոլսոյ եւ Կեսարիոյ ճամբուն բարւոքման շնորհիւ, Գաղատիոյ թղթատարն, որ առաջ Սեբաստիոյ, Եւդոկիոյ եւ Ամասիոյ ճամբով կ'անցնէր, հիմա Կեսարիայէն կ'անցնի, որով Կեսարացիք արեւելեան գաւառաց հետ ալ աւելի սերտ յարաբերութեան մէջ կը գտնուին։ Բայց Կեսարիա այս մասին աւելի մեծ բարւոքում մ'ունի տեսնել, կայսերական Իրատէին շնորհիւ, որով Գաղատիոյ երկաթուղին մինչեւ հոն պիտի երկարաձգուի։ Այն ատեն Լոնտոնէ գրուած նամակ մը շաբաթ մը եւ Նիւ Եորքէ գրուած նամակ մը երկու շաբաթէն պիտի հասնի Փոքր Ասիոյ այս կեդրոնական քաղաք, որոյ առեւտրական եւ տեղական կարեւորութիւնն ամ ըստ ամէ կ'աւելնայ կ'ընդարձակի։

Մալաթիոյ առաջին երկրաշարժին ցնցումը դէպ ի հարաւ մինչեւ Հալէպ զգալի եղած է եւ դէպ ի հիւսիս մինչեւ Եոզղատ։ Կեսարիոյ եւ Թալասի մէջ ալ նոյն օրը ցնցում մ'եղաւ, թէեւ Մալաթիայէ հեռաւորութիւնն՝ ուղիղ գծի վրայ՝ 175 մղոն է։ Ասկէ կրնայ մակաբերուիլ թէ խեղճ Մալաթիացւոց կրած ցնցումն ո՛րքան սաստիկ էր։ Թղթակիցը կ'ըսէ որ ինք թէեւ քառասուն տարիէ հետէ Կեսարիոյ մէջ կը բնակի, այսպիսի ցնցում չէր զգացած։ 1835 ին Կեսարիոյ մէջ մեծ երկրաշարժ մը եղած է եւ իբր 600 անձինք կորած են փլատակաց ներքեւ։

Կեսարիա ենթակայ է Գաղատիոյ կուսակալութեան, եւ այժմ շատ կը գովուի Գաղատիոյ կուսակալ Աբէտին փաշայի հոգածութիւնն, որով, ինչպէս գրուեցաւ թուրք լրագրաց մէջ ալ, ձմրան մէջտեղ Կեսարիա այցելեց, ի բարւոք յարդարումն գործոց, եւ ամեն ինչ նոր կարգի եւ կանոնի մէջ դրաւ։ Աբէտին փաշա շատ գործունեայ կուսակալ մ'է կ'ըսուի։

Աւագ երկուշաբթի գոհունակութեան փառաբանական աղօթք եւ վեհ. Սուլթանին կենաց համար մաղթանքներ կարդացուեցան եկեղեցեաց մէջ։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔ Ի ՌՈՒՍՉՈՒՔ

Այսօր (8 ապրիլ) տեղական թերթի մը մէջ յօդուած մը կարդացի Ռուսչուքի աղջկանց նկատմամբ։ Յօդուածագիրը կ'աղաղակէ եւ կ'եզրակացնէ թէ Ռուսչուքի մէջ աղջիկ չկա՜յ, աղջիկ չկա՜յ. սակայն որոշ կերպիւ չըսեր թէ ինչպիսի աղջիկներ կը բաղձայ Ռուսչուքի համար, եւ դպրոցի ծրագրին մէջ ինչ բարեփոխութիւններ կ'առաջարկէ այդ նպատակին հասնելու։

Այդ քննադատութիւն անիրաւ է. եթէ քննադատութեան կերպը նախատական չըլլար, թերեւս [illegible]։

Ռուսչուքի հասարակութիւնը մեծաւ մասամբ երկրագործ, արհեստաւոր են։ Մաս մը կայ որ տպաւոր եւ ցորենի առեւտուր կ'ընէ. ժողովուրդն առհասարակ իր աշխատութեամբ իր օրապահիկը կը ճարէ. մաս մը կայ բարեկեցիկ եւ փոքր մաս մ'ալ հարուստ։ Բայց գաղտնի կամ հրապարակային կերպիւ մուրացող գրեթէ չկայ։

Ռուսչուքի կիներուն գրեթէ մէկ քառորդը դաշտերը կ'երթան աշխատելու, գմայլելի կերպիւ պահպանելով իրենց պարկեշտութիւնը. միւս մասը տան աշխատութիւնները կ'ընեն աստիճան առ աստիճան. ամենքը խիստ խնայող են, ինչպէս նաեւ իրենց ամուսինները. կը խնայեն իրենց աղջիկները կարգելու համար, կը խնայեն չար օրերու համար, կը խնայեն Երուսաղէմ երթալու համար։ Եթէ քիչ մը բարեկեցիկ են, օրականով աշխատող կանանց կը գործածեն քիչ մը դժուարին գործերու համար, ինչպէս լուացք, եփել, որք պարբերաբար կը ներկայանան. եթէ հարուստ են, կին ծառայ մը կը բռնեն ամսականով կամ տարեկանով. այս ծառայ տան դժուար գործերը կ'ընէ տանտիկնոջ եւ աղջկանց օգնութեամբ, իսկ ճաշ-կերը, կարն եւ տղան նայելը տանտիկնոջ եւ աղջկանց կը վերաբերին. ահա այս է համառօտիւ Ռուսչուքի կանանց դերն. Աւելորդ է ըսել թէ ամեն բան իր բացառութիւններն ունի։

Ռուսչուք 30 տարիէ ի վեր աղջկանց վարժարան ունի. ընդհանրապէս անդ կ'աւանդուին հայերէն, կրօնագիտութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, առողջաբանութիւն, քիչ մը թուաբանութիւն, եւ ձեռագործ։ Գրեթէ այժմ ամեն ընտանիք իր աղջիկը վարժարան կը ղրկէ. բայց, ինչպէս վերի նկարագրութենէն կ'երեւի, աղքատիկ ընտանիքներն իրենց աղջկանց պէտք կ'ունենան երբ ասոնք 10 տարեկան կ'ըլլան. սակայն միջին, բարեկեցիկ եւ հարուստ դասն իրենց աղջիկունքը վարժարան կը ղրկեն, մինչեւ որ ասոնք յարբունս հասնին. այս աղջիկունք ընդհանրապէս գիտեն իրենց լեզուն իրենց պէտք եղածին չափ. կը հասկնան Ս. Աւետարանն, աղօթքները. վարժ են տնական ձեռագործի մէջ։ Այս տարիքէն վերջ Ռուսչուքի աղջիկները տունը կը մնան իրենց մօրմէն գործնական տնտեսութիւն սորվելու համար. իրենց պարապոյ ժամերուն մէջ գիրք կարդացողներ ալ շատ կան. թէ՛ աղքատ եւ թէ հարուստ յարկերու տակ թափանցելու է տեսնելու համար թէ Ռուսչուքի կիներն որքան աշխատասէր, որքան առաքինի, որքան անշահախնդիր են, առանց եւրոպական լեզու մը գիտնալու, առանց դաշնամուր (բիանօ) ունենալու։ Պէտք է ըսենք որ դրամօժիտ ալ չկայ։

Ռուսչուքի աղջկանց վարժարանի ծրագիրն իր ընդհանուր գիծերուն մէջ խիստ յարմար է քաղաքին։ Իղձ է թէ միշտ բարեկարգ երթար։ Սակայն այս ելեւէջ գրեթէ մեր բոլոր վարժարաններուն վրայ կը տեսնուի դժբախտաբար. ասոր պատճառները բազմաթիւ են։

Ցաւալի է որ սխալ տեղեկութիւններու վրայ հիմնուելով Ռուսչուքի աղջիկները կը ներկայացուին ամբողջ Հայոց լոկ [illegible] կոյրեր եւ հայրերնին՝ իրենց աղջկանց համար փեսայ փնտռողներ։ Ռուսչուքի հայր մը ինքզինք մարդոց յետին կը նկատէ եթէ մէկու մը առաջարկէ իր աղջիկն ի հարսնութիւն. միշտ փեսացուին հայրն է որ կ'երթայ գտնել աղջկան հայրը։

Այս երկրորդ անգամն է որ նոյն թերթ սխալ տեղեկութիւններ կ'առնէ Ռուսչուքի վերաբերութեամբ։

Կը վերջացնեմ խօսքս, փոքրիկ փոփոխութիւն մը առաջարկելով Յօդուածոյն վերնագրին, որ Հարսնցու աղջիկ կը փնտռուի։ Կ'առաջարկեմ վերնագրել զայն սապէս. Պոլսէն [illegible] հարսնցու աղջիկ մը կը փնտռուի Ռուսչուքցի մը համար, որ իր [illegible] մէջ իր [illegible] համար, կ'երեւի թէ անոնց պէտք ունի։

ՅԱԿՈԲ ՊՈՅԱՃԵԱՆ (*)

(*). — Յօդուածագիր Պօյաճեան էֆ., ինքն ալ Ռուսչուքցի, պետական վարժարանաց եւ կեդրոնական Վարժարանի չափագիտութեան հանրածանօթ դասատուն է, որ մեր ընթերցողաց ներկայացնելու չի կարօտիր։ Ա. Խ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱ. — Պ. Կլատսթօնի կուսակցաց մէջ արտայայտութեան պատճառ եղաւ այն լուր թէ նախարարական մեծամասնութենէն ոմանք դիտում յայտնած են իռլանտական ծրագրին մէջ բարեփոխում մտցնելու, որով բողոքական եւ սաքսոնեան Ուլսթէր դուրս թողուի ապագայ Իռլանտական Խորհրդարանի շրջանակէն, եւ ուղղապէս Ուէսթմինսթըրի Խորհրդարանին իրաւասութեան ներքեւ մնայ։ Այն ատեն Պէլֆասթի Բողոքականք իրաւունք չեն ունենար գիտելու թէ կաթոլիկ մեծամասնութեան կ'ենթարկուին։ Ի սկզբան Պ. Կլատսթօն համակիր չէր այս փոփոխման. բայց Իռլանտայի մաս մը բողոքականք ժամանակ իրենց բազմաթիւ եւ բազմադիմի ներկայացուցիչներուն միջոցաւ այնքան կազմակերպեալ կերպիւ կ'ընդդիմանան ծրագրին ընդունելութեան, որ ուրիշ հնարք չի մնար վարչապետին բայց եթէ իր ծրագրին նոյնութեամբ ընդունելութեան վրայ պնդել։ Այսօր, ուրբաթ, տեղի կ'ունենայ վճռական քուէարկութիւնը։

ՍԵՐՊԻԱ. — Ցարն եւ Ցարուհին ի Լիվատիա [illegible] հրաւիրեր են Նաթալի թագուհին։ Կը յիշուի թէ Նաթալի թագուհին Պելկրատ դառնալու համար պայման դրած էր որ իր որդին չափահաս ըլլայ։ Հիմակ Աղեքսանդր Ա. չափահասութիւն հռչակուած ըլլալով, իր մայր ի մօտոյ Պելկրատ պիտի դառնայ։ Միւս կողմէ, պատանի թագաւորն հրաւէր ղրկած է իր դասատուներուն, իրենց այցելութիւնները շարունակելու. զի որոշած է յառաջ տանիլ իր ընդհատեալ ուսումնքը։

ՏՔԹ. ՏՕՔԻՉ, Սերպիոյ նոր Նախարարապետը, որ դեռ 50 տարեկան չկայ, ատկէ յառաջ Պետական Խորհրդոյ ատենապետի պաշտօնը միացուցած էր պատանի թագաւորին դաստիարակի պաշտօնին հետ։ Պելկրատի բարձրագոյն Նախակրթարանին մէջ բնական գիտութեանց դասատու էր, եւ ցարդ կարեւոր մասնակցութիւն մը չէր ունեցած քաղաքական գործերու մէջ։ Իր ուսումն ըրած է Վիէննայի Համալսարանին մէջ, եւ Աւստրիա-Հունգարիոյ նկատմամբ նպաստաւոր զգացում ունեցող հանրային մարդոցմէն է Սերպիոյ մէջ։ Լատինական Զատկին ի Վիէննա կը գտնուէր. եւ այն ատեն տեղեկութիւն չունէր իրեն յանձնելի նոր պաշտօնին վրայ։

ՆՈՐ ՍԿՈՒՓՉԻՆԱՆ, որոյ ընտրութիւնն հրամայեց Աղեքսանդր Ա. կայսր իր յայտարարութեամբ, լուծեալ Խորհրդէն շատ տարբեր պիտի ըլլայ. զի [illegible] ինչպիսի միջոցներով կազմուած ըլլալն յայտնի է։ Ռատիքալեանք այլ եւս նոյնքան բազմաթիւ երեսփոխան ունենալ չեն կրնար յուսալ, եւ տարակոյս չկայ թէ նոր վարչութիւնն, որ աւելի ժողովրդական է, ստուար մեծամասնութիւն պիտի վայելէ նոր Խորհրդարանին մէջ։

ԱՂԵՔՍԱՆԴՐ Ա. թագաւորին համար Թայմզին Վիէննայի թղթակիցը կ'ըսէ թէ շատ խելացի պատանի մ'է, որ կանուխէն վարժուած է ինքն իր գլխով խորհելու, եւ ցուցած է պաղարիւնութիւն, խոհականութիւն եւ զգուշութիւն։ Իր հօր իմացականութենէն մեծապէս ներշնչուած է, որպէս կ'ըսուի իր հանած յայտարարութեան մէջ ալ։ Թէպէտ հազիւ 17 տարեկան, բայց իր տարիքէն չսպասուած փորձառութիւն ունեցած եւ հասուցած է։ Թէ ո՛ր աստիճան ինքզինքին տէր է, իր [illegible] ալ ցուցած է։

ՄԱԶՆ, [illegible] — Ժամանակ մը յառաջ Պ. Մօթ պնդեց թէ մարդկային ամենաբարձր եւ լաւագոյն ցեղերն ամենէն մազոտ ցեղերն են, եւ այս առթիւ ցոյց տուաւ թէ Աւստրալիոյ բնիկներն եւ ուրիշ վայրենիք խիստ ցանցառ, ցցուած եւ կարճ մազ ունին։ Կը կարծէ թէ այս բան բնական մրցման եւ բնական ընտրութեան մէկ արդիւնքն է, յորմէ կը հետեւցնէ թէ մազոտ ցեղն աճելով ու բազմանալով, մի քանի դար ետքը, տեղի պիտի տան մազի կողմէ թափուր [illegible] արք եւ կանայք, եւ մարդկութիւնն ընդհանրապէս գեղեցիկ մազերով մօրուսաւոր մը պիտի ծածկուի։ Տքթ. Վայսէնպերկ կը յայտարարէ թէ կանանց մէջ ընչացք այժմ աւելի յաճախ կը տեսնուի քան յանցեալում։ Ի Կ. Պոլիս, կանանց 100էն 10ը, գլխաւորապէս Հայուհիք իրենց վերին շրթանց վրայ ունին (եղեր) այս առնական համարուած զարդէն։ Երեսի մազերը ջնջող գործիք եւ բաղադրութիւնք ամեն ժամանակէ աւելի կը խնդրուին Ֆիլատելֆիոյ ամերիկեան գեղուհեաց մէջ։ Այնու հանդերձ, Ամերիկուհեաց 100էն 3ը պեխ եւ մօրուք ունին, եւ Մոսքուայի մէջ ալ կանանց համեմատութիւնն այս մասին Կ. Պոլսոյ հաւասար է։

ՄԱՔՍ ՄԻԼԼԷՐ, հանրածանօթ արեւելագէտ դասախօսն Օքսֆորտի Համալսարանին, որ բնիկ Գերման է, այս օրերս Վիլհէլմ կայսրէն նուէր ընդունեց Ն. Կ. Վեհափառութեան բնական գիրքով կենդանագիրն՝ աջանշելի Փլորենտեան ձեւով, ի վարձ հմուտ Բրոֆէսորին նորագոյն տպագրութեան Ռիկ Վէտայի, յորմէ օրինակ մը նուէր ղրկած էր գերման Վեհապետին։ Մաքս Միլլէր պրահմանական այս հին գիրքը տպեց ծախիւք Վիզիանակրամի Մահարաճային, [illegible] շատ կը փափաքէր Հնդկաստանի ամեն կողմը ցրուել Հնդկական Ս. Գիրքը։ Մաքս Միլլէր կարգ մը օրինակներ ալ ղրկեց սանսկրիտ գիտցող գերման գիտուններուն։

ԱՐԿԱԾ ՍԱՌՆԱԿՈՅՏԻ. — Ալպիւրթօն անուն անգղիական նաւ մը Սան Ֆրանչիսկոյէն ապրիլ 9ին Անգլիա կը հասնի անկերպարան վիճակի մէջ։ Ճամբորդութիւնը կը տեւէ 171 օր, եւ գրեթէ հրաշիւք կ'ազատի ընկղմելէ։ Յունուար ամսուն 9ին՝ նաւապետը կը տեսնէ թէ սառնակոյտերու շրջապատեալ է նաւը, թէեւ ոչ մօտէն, եւ մթնոլորտն ալ կը սկսի շատ ցուրտ ըլլալ. սակայն կէս օրէն ետեւ աւելի մօտէն բազմաթիւ սառնակոյտեր կը տեսնուին, նաւուն վիճակը մտաւորապէս վտանգի կ'ենթարկի, եւ թանձր մշուշ մը ալ կը պատէ։ Գիշերը վրայ հասնելով, ցրտոյն սաստկութիւնը կ'աւելնայ, որ ծածանող սառնակոյտերուն մօտենալը կը զգացնէր։ Ի հարկին նաւը թողլու համար պատրաստութիւններ կ'ընեն նաւաստիք, բոլոր ազատարար նաւակներուն (լայֆ պոտ) մէջ ուտեստ կը զետեղեն, եւ հրաման տրուած պահուն մէկ վայրկենի մէջ զանոնք ծովն իջեցունելու կազմ եւ պատրաստ վիճակի կը վերածեն։ Թէեւ հնչող հողմը չափաւոր էր, սակայն հանդարտ չէր ծովը։ Առաւօտեան ժամ 2ին նաւուն գլխի կողմը հսկող նաւաստին ձայն կուտայ թէ սառնակոյտի մը վրայ կ'իյնան, եւ իսկոյն նաւը կը զարնէ 600 ոտք բարձրութիւն եւ կէս մղոն երկայնութիւն ունեցող ահագին սառնակոյտի մը։ Նաւուն ամբողջ մարմինն ուժգնապէս կը սարսի, մէջը գտնուողներն ալ վայրկենական ընկղման երկիւղէն կը պաշարուին։

ԹԵՐԹՕՆ «ԱՐԵՒԵԼՔ»Ի (122)

Ք. ՌԻՇՊՈՒՐԿ ԵՒ Ք. ԼԻՑԷՆ

ԲԱՐԻԶԻ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻՔ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ
ՀՐԵՇՏԱԿ ԵՒ ՍԱՏԱՆԱՅ

—Բիէռ Թեռասէն, Բիէռ Թեռասէն, կրկնեց խենդը երկու անգամ։

—Նոտար էր։

—Ա՛հ, նոտա՛րը, նոտա՛րը, ըսաւ մարքիզը։

—Նոտարը ամուսնացած էր, շատ գեղեցիկ կին մը ունէր, Մաթիլտը, գեղանի Մաթիլտ Թեռասէնը։

—Մաթիլտ Թեռասէն, մրմռաց խելագարը։

Ամփոփուելու ձեւ ըրաւ եւ բուռն ճիգ մը՝ կորսուած յիշատակ մը ըմբռնելու համար։

—Այո, յարեց Էնբեռիա, եւ Վարանտեգ մարքիզը, որ երիտասարդ էր եւ գեղեցիկ, տարփաւորն եղաւ գեղանի Մաթիլտին, Բիէռ Թեռասէն նոտարին կնոջը տարփաւորը։

Մարքիզը մտիկ կ'ընէր։ Դէմքին շարժումներէն, Էնբեռիա կը տեսնէր թէ Մաթիլտի եւ Բիէռ Թեռասէնի անունները անոր միտքը կուգային. բայց խենդը չէր հասկնար։ [illegible] յիշատակներու փշրանքներ միայն կ'արթնցնէր ի նա։ Նուաղած մտածումը ա՛լ միմիայն խուսափուկ լոյսերով կը լուսաւորէր այս հիւանդ ուղեղը։

—Վարանտեգ Մարքիզ, ըսաւ անոր Էնբեռիա խորհրդաւոր երեւոյթ մը առնելով գրեթէ, նայեցէք, նայեցէք....

Եւ մետալիոնն անոր ձեռքը դրաւ։

Խենդը նախ դարձուց զայն իր ձեռքերուն մէջ, ինչպէս տղայ մը իր խաղալիկը. չէր տեսներ։

Յանկարծ սարսռաց, ձեռները դողդողացին, դէմքը կենդանացաւ, աչուըները շողացին։ Պատուհանին մօտեցաւ աշխուժով՝ աւելի աղէկ տեսնելու համար։ Ճանչցած էր իր կենդանագիրը։

—Վարանտեգ մարքի՛զ, մրմնջեց։

Էնբեռիա, անկից քանի մը քայլ անդին անշարժ եւ չնչասպառ, հետաքրքրութեամբ զայն կը դիտէր։

Վայրկեան մը ետքը, խենդը ետ դարձաւ, եւ առանց բառ մը արտասանելու, առանց շարժում մը ընելու, տեսակ մը անյագութեամբ դիտեց սիրուն դիմագծերն այն դժբախտ կնոջ զոր ժամանակով ճանչցած ու սիրած էր։

Էնբեռիա տեսաւ որ արցունքներ կը վազէն անոր այտերէն վար։ Ա՛հ, մարքիզին յուզման ճշմարիտ պատճառը գիտնալու համար թերեւս տար ամեն ինչ որ ունէր։ Յիմարը ճանչցա՞ծ էր նոտարին զոհին դէմքը։ Բայց այն ատեն, ինչո՞ւ հանդարտ եւ անդրդուելի կեցած էր իր [illegible] առջեւ, որ ա՛յնքան կը նմանէր իր մօրը։ Տարօրինակ եւ անհասկանալի բան մը կար ասոր մէջ։

Արդարեւ, այս յուզում պատճառ մը ունենալու էր. մարքիզին սիրտն անպատճառ զգայութիւն վերստացած էր։ Մտածո՞ւմ մը, բանականութեան նոր եւ արագ լո՞յս մը ունեցած էր։

Էնբեռիա կ'ըսէր ինքնին.

—Հիմակ որ հոս իմ տունս է, խելքը գլուխը կրնայ գալ, ա՛լ վախնալու բան մը չունիմ։

Ոտքի շշուկ մը լսուեցաւ եւ Էնբեռիա հասկցաւ թէ Բիէռ Թեռասէն պիտի երեւի։

Դէպ ի խենդը վազեց՝ մետալիոնը ձեռքէն առնելու համար։ Բայց անիկա իր ձեռքին մէջ սեղմելով զայն, խորունկ ձայնով մը ըսաւ.

—Ոչ, իմս է այս։

Դուռը բացուեցաւ, Լա Բռաթիք ներս մտաւ։

Մարքիզը, իբր թէ վախնար որ կը գողնան, մետալիոնը կուրծքին մէջ պահեց աշխուժով. Էնբեռիա ժամանակ չէր ունեցած ձեռքէն խլելու զայն՝ բռնութիւն բանեցնելով։

Նախկին Նոտարը կանգ առած էր սրահին մէջտեղը։ Երկու մարդերն իրարու երես նայեցան։ Յանկարծ Բիէռ Թեռասէնի դէմքը տժգունեցաւ, դիմագծերն այլայլեցան սոսկալի կերպով. խաժ աչուըները վառեցան եւ փայլուն բոց մը ժայթքեց անոնցմէ։

—Ինքն է, Վարանտեգ մարքի՛զը, գոչեց. վերջապէս կը գտնեմ զայն, վասն որ կինս առաւ ձեռքէս, որ պատիւս գողցաւ ինէ։

—Նոտա՛րը, նոտա՛րը, մրմռաց մարքիզն ալ։

Բիէռ Թեռասէն ոռնում մը արձակեց եւ ուզեց խենդին վրայ խոյանալ. բայց Էնբեռիա ժամանակ ունեցաւ անոր առջեւ նետուելու, սաստկապէս անդին հրեց զայն։

—Վարանտեգ մարքիզը խենդ է, չպիտի դպչիս անոր, վասնզի կ'ուզեմ որ խելքը գլուխը գայ... եւ յետոյ, դուն իմ ոչ մէկ բանս ես, անիկա է իմ հա՛յրս։

Լա Բռաթիք խուլ մռլտուք մը արձակեց։

—Ատոր համար աւելի կ'ուզեմ խեղդել զայն, վրայ բերաւ կատաղութեամբ. քու մա՞յրդ անպատուեց։

—Եւ դուն, թշուառական, դո՞ւն ինչ ըրիր, գոչեց Էնբեռիա ակնարկովը չանթահարելով զայն. դուն սպաննեցիր զայն. իսկ անիկա սիրեց։ Երբ Պրազիլիայէն հեռացաւ Ֆրանսա գալու համար, իմ վրաս կը մտածէր, իմ ապագայիս վրայ, իմ երջանկութեանս վրայ։ Ա՛հ, աղէկ կը ճանչնար քեզի, մօրս դահի՛ճը։ Գուշակած էր թէ ի՛նչ պիտի ընէիր զիս, քու վրէժխնդրութեանդ եւ վայրագութեանդ մէկ զո՞հը։ Օ՛հ, պատասխանէ, ձեր երկուքէն ո՞րն աւելի անգութ է։ Հաւասարապէս երկուքդ ալ կ'ատէի. է՛յ ուրեմն, վայրկեանէ մը ի վեր կը գթամ անոր վրայ... գեղեցիկ էր ան, բարի, մեծանձն, սիրալիր, անձնուէր ըլլալու էր. մայրս սիրեց զայն, գիտեմ, եւ գիտեմ նաեւ որ ատեց քեզի, հրէ՛շ։ Ոչ, ա՛լ չեմ ատեր զայն. կ'ուզեմ յարգել, իմ հա՛յրս է։ Կը լսե՞ս, Բիէռ Թեռասէն, ահա իմ հայրս, իմ հա՛յրս։ Եւ այն բոլոր ատելութիւնը որ սիրտս կը լեցնէ, որ կը խեղդէ զիս, քեզ համար, քեզ համար է միայն։

Նախկին Նոտարը այս խօսքերուն պատասխանեց մռնչիւնով մը։ Աչուըներէն արիւն ցայտեց, շուրթերը դեղնորակ փրփուրով մը ծածկուեցան. ակռաները կը կճրտէին, դէմքը սոսկալի արտայայտութիւն մըն էր առած. այլանդակ էր կերպարանքը։

Խելայեղ, կատաղի, ինքզինքէն ելած, մարքիզին վրայ ցատքեց ինչպէս վագրն իր որսին վրայ։ Բայց, յեղակարծ սարսափով մը համակուած, մարքիզը խոյս տուաւ անկից՝ վազելով սրահին միւս ծայրը, ուր բացուածք մը փնտռեց փախչելու համար։

—Ժիւլի՛, Ժիւլի՛, կանչեց Էնբեռիա։

Սենեկապանուհին ներս մտաւ անմիջապէս։

—Տա՛ր զանիկա, ըսաւ Էնբեռիա մարքիզը ցուցունելով անոր։

—Ո՞ւր տանելու է, հարցուց Ժիւլի։

—Ա՛ն, բանտի՞ մը մէջ, երբե՛ք... կապոյտ սենեակը, կապոյտ սենեակը տար զայն։

Մինչ ինքը կը բռնէր Լա Բռաթիքը՝ պատին կռթնած, Ժիւլի բռնեց խենդին ձեռքէն եւ դուռ մը բացաւ ուսկից անհետ եղան։

Պահ մը ետքը, ա՛լ մարքիզն իր առջեւ չտեսնելով, նախկին Նոտարին կատաղութիւնը մեղմացաւ։ Էնբեռիայի դաժան եւ սիրական նայուածքին տակ, Նոտարը գլուխը ծռեց։ Մասամբ բռնութեամբ, մասամբ բարի կամեցողութեամբ իր սենեակն եկաւ, ուր, աւելի ապահով ըլլալու համար, մանկամարդ աղջիկը փակեց զայն։

Յետոյ, Էնբեռիա կանչեց Ժիւլին, որ հրահանգներ տուաւ իր երկու հիւրերուն մասին, ապա իր սենեակն առանձնացաւ։

Ինկաւ թիկնաթոռի մը վրայ։ Իր ճակտին վրայ, յօնքերուն մէջտեղը, ծալք մը փորուած էր։ Նայուածքին մէջ մոլորագին բան մը կար։ Հառաչ մը արձակեց։ Ի՞նչ կ'անցնէր ի նա։ Ինքն իսկ չպիտի կրնար ըսել։ Յանկարծ աղաղակ մը արձակեց. արցունք մը ինկած էր ձեռքին վրայ։ Գնաց կեցաւ հայլի մը առջեւ։ Աչուըները թրջած էին. տեսակ մը բարկութեամբ սրբեց զանոնք։

—Ի՞նչ ունիմ, հարցուց ինքնին։ Յուզեալ կը զգամ ինքզինքս, անհանգիստ եմ, կարծես վախ ունիմ... եւ կուլամ... օ՛հ, լա՜մ, ե՛ս...

Ժպիտ մը կծկեց իր շուրթերը, մթին բոց մը ժայթքեց աչուըներէն։

—Ոչ, ոչ, արգահատանք չըլլար, գոչեց. ես սիրելու համար ծնած չեմ, ատելու համար կ'ապրիմ։

Կից սենեկին մէջ, կապոյտ սենեակը, ինչպէս անուանած էր Էնբեռիա, Վարանտեգ մարքիզը, մետալիոնն իր ձեռքին մէջ բռնած, հետզհետէ կը նայէր իր եւ Մաթիլտ Թեռասէնի կենդանագիրներուն. Բուռն եւ անընդհատ յուզումներ այնպիսի անակնկալ արդիւնքներ յառաջ բերած էին յինքն, զորս գիտութեան բոլոր աղբիւրները չէին կրնար ձեռք բերել։ Յեղակարծ լոյս մը ծագած էր ուղեղին մէջ, կը սկսէր տեսնել իր անցեալն. քիչ քիչ յիշողութիւնը տեղը կուգար, մտածումը դուրս կ'ելնէր խորին մթութենէն։

(Շարունակելի)

Նաւուն գլուխը խորտակուելով ներս մտնել կը սկսի ջուրն, և մօտաւոր կայմն ալ շրջապատող տախտակամածներով նաւուն մէջ կը գլորի: Նաւապետին անմիջական հրամանին վրայ դառն ճգամբք և աշխատութեամբք հազիւ կարող կ՚ըլլան նաւաստիք սառնակոյտերէն նաւն ազատել, և առժամապէս փակել ջուրին ներս մտած կողմերը: Սոյն պահուն նաւը կը գտնուէր լայնութեան հարաւային 49,30 աստիճանին և երկայնութեան արեւմտեան 43 աստիճանին մէջ: Վերջապէս մշուշը կը փարատի, և կը տեսնեն թէ տակաւին մի քանի սառնակոյտերու մօտ կը գտնուին: Բարեբախտաբար, նաւն ազատել կը յաջողին այս վտանգաւոր արգելքներէն, և վերստին բաց ծովը կը մտնեն:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պալատական պաշտօնատար մը երէկ իրիկուն Պատրիարքարան բերաւ կայս· պալատան առաջին քարտուղար Վսեմ· Սիւրէյեա փաշայի մէկ գիրն որով Վեհ· Սուլթանի բարձր գոհունակութիւնը կը հաղորդէր այն շնորհաւորութեանց և բարեմաղթութեանց համար, զորս Ամեն· Ս· Պատրիարք Հայրն ըրած էր Պայրամի տօնին առթիւ:

Ամեն· Ս· Պատրիարք Հայրը Պայրամի առթիւ երէկ շնորհաւորական այցելութիւն տուաւ Ներքին գործոց նախարար Վսեմ· Խալիլ Րիֆաթ փաշայի, Կրթական գործոց նախարար Վսեմ· Զիւհտի փաշայի, Ելմտական Նախարար Վսեմ· Նազիֆ փաշայի, Առեւտրական ու Հանրօգուտ շինութեանց Նախարար Վսեմ· Թեւֆիգ փաշայի և Բ· Դրան Պէյլիքճի Րաիֆ պէյի:

Բերայի ազգային վարժարանաց ուսուցիչք նախընթաց օր դարձեալ ի նիստ գումարուելով՝ նկատողութեան առին աղջկանց վարժարանի ուսմանց ծրագիրն, և յետ քննութեան վերջնապէս ընդունելով զայն՝ յանձնեցին Կրթական Խնամակալութեան ի գործադրութիւն:

Ըստ ծրագրին, վարժարանը բարձրագոյն նախակրթարան պիտի ըլլայ վեցամեայ դասընթացքով· բայց Խնամակալութիւնն որոշած է երկամեայ շրջան մը յաւելուլ, այսինքն՝ ամբողջ ութամեայ շրջանի բարձրացնել վարժարանի ուսմանց ընթացքն, երբ ներկայ բարձրագոյն կարգը լրացնէ նախակրթութեան վեցերորդ տարին:

Տփղիսի մարտ 28ի թիւէն կը քաղենք հետեւեալ լուրերը·

Երեքշաբթի, ամսոյս 23-ին երեկոյեան ժամի 6-ին Թիֆլիս ժամանեց Թեմիս նախկին առաջնորդը, այժմ Էջմիածնի Սինոդի անդամ Ս· Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը:

Նորին Սրբազնութիւնն ուղարկուած է Տ· Տեղակալից՝ քաղաքումս Զատկական տօներին ներկայ գտնուելու և վերջերս ծագած մի քանի հարցերը պարզաբանելու համար:

—Յունուարի 10-ին Երեւանի քաղաքային ժողովարանում տեղի ունեցաւ մի շքեղ երեկոյթ յօգուտ Գայեանեան օր· դպրոցին, որի նմանը Երեւանը շատ չէր տեսած: Կարգադրիչ յանձնաժողովը ոչինչ միջոց և ջանք չխնայեց երեկոյթի շքեղացնելու համար: Առանձնապէս աչքի էր ընկնում Պ· Կարապետ Կամսարականի եռանդուն աջակցութիւնը:—Մուտք եղել է 1404 ր· քանի մի կոպէկ, ծախք 202 ր·, զուտ արդիւնք 1202 ր·:

—Պ· Շահլամեանը, որն ինչպէս մենք հաղորդել էինք անցեալ համարում, չի լինելու Պետերբուրգի բեմի վրայ· նա արդէն պայման է կապել Պալմի հետ որն եկող սեզոնին պահելու է օպերային խումբ: Պարոնը ամսական պէտք է երգի 10 անգամ և ստանայ 1,200 ր·, բացի դրանից երկուսէկս բենեֆիս: Նիւթական տեսակէտից այդ աւելի լաւ է Պ· Շահլամեանի համար, որը Պետերբուրգի բեմի վրայ ստանում էր 3,000 ր· տարեկան:

—Կարա-Մուրզան վճռել էր շաբաթն երկու անգամ տալ խմբական երգեցողութեան դասեր Երեւանի թեմական դպրոցի աշակերտներին և արդէն մի քանի փորձեր արած էր· մէկ երկու ժամեայ ընթացքում նա յաջողեց պատրաստել 100 հոգի քառաձայն երգելու: Սակայն հոգաբարձութիւնը արգելել է այդ պարապմունքները շարունակել, առարկելով թէ ինչ գործ ունի օտարազգի երաժշտապետը հայ դպրոցում:

—Ամսիս 20 ին շաբաթ օրը Հայուհեաց ընկերութեան բաց արած խոհարարական կուրսերը բոլորեցին երկրորդ դասաշրջանը: Այս երկու ամիսներում եւս դասաւանդութիւնը շարունակւում էր նոյն ծրագրով, ինչ ծրագրով այն և նախորդ շրջանում, ունկնդիր էին 15, այն է. Աքիմեան Մարիամ, Ալիխանեան Վարվառէ, Ամիրաղեան Լիւսիա, Իգմայլովիչ Եւգինիա, Իգմիրեան Հեղինէ, Իսարլեան Ադելայիդ, Քալանթար Սոֆիա, Ղորղանեան Մարիամ, Նազարբէկեան Հեղինէ, Սերեբրեակեան Մարիամ, Տէր Միքայէլեան Մատիլդ, Տէր Տէր Սարգսեանց Թամարա, Տիգրանեան Նատալիա, Ծովիանեան Լիւբով և Ջիթախեան Աննա: Բոլորն էլ ընթացաւարտման վկայագրեր ստացան: Հիւրերի քննութեան առաջարկուած էին ունկնդրուհիների պատրաստած կերակուրները: Հետեւեալ՝ երկրորդ շրջանը բացուելու է ապրիլի երկուսին:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

9 Ապրիլ 1893

Մասիսի վաղուան թիւը կը պարունակէ բարեյիշատակ ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻՔԹԱՇԼԵԱՆԻ պատկերը·

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՇՈՒՐՋԸ [Խմբագրական]
ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՓՈՒՇՆ ՈՒ ՎԱՐԴ (Անտիպ քերթուած)
Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ.— Անգլիացի արեւելագէտներու պատասխանը Մասիսի հարցումին
Բրոֆէսէօր Ֆ. Ս. ՔՈՆԻՊԻՐ
Բրոֆէսէօր ՄԱՔՍ ՄԻՒԼԼԷՐ

ՕՏԵԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ (Նամակ առ Պէշիքթաշլեան—Օտեանի Օրագիրը)
ԵՐՈՒԱՆԴ ՕՏԵԱՆ

ՄԵՐ ՊԱՏԿԵՐԸ. Մկրտիչ Պէշիքթաշլեան
ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ. Նիրվանայի բունը—Չինական Առեղծուածը—Խնամութիւն Չինաց հետ
ԳԱՌՆԻԿ ՖՆՏԳԼԵԱՆ

ՔԻՉ ՄՆԱՑ ՈՐ... (Դարավերջիկ պատմութիւն)
Ե. ԱԼՓԻԱՐ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Գին ՔԱՌԱՍՈՒՆ փարայ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Երէկ իրիկուն ստացանք Յայտագիրն այս գիշերուան ներկայացման որ տեղի պիտի ունենայ ի Թատրոն Վէրտի: Երիտասարդ գրողի մը, Արշակ էֆ. Զօպանեանի, թատերական անդրանիկ հեղինակութիւնը պիտի ներկայացուի, ՄՈՒԹ ԽԱՒԻՐ, թատերգութիւն չորս արարուածով, Ֆասուլեաճեան խումբին կողմէ: Սիննեան նուագախումբը պիտի նուագէ միջնարարներուն: Դերակատարներն են երկու դերասանք, Թովմաս էֆ. Ֆասուլեաճեան, Վ. Քիրեճեան և հինգ դերասանուհիք՝ ընդ որս Տիկին Ֆասուլեաճեան և Օր. Քնար: Թատրոնին գներն են՝ Պէնուառ և Պէլ-էթաժ օթեակները մէկ օսմ. ոսկի, Բ. յարկի օթեակները՝ կէս ոսկի, Թիկնաթոռք՝ քսան ղրշ, Նստարանք՝ տասը ղրշ, Բառասի և մուտք՝ հինգ ղրշ:

Մ···ն Խ···երը, որչափ որ իմացանք, ժողովրդական դասակարգի ընտանիքներու բարուց և խօսակցութեանց պատկեր մըն է եղեր, և ինչ որ ալ ըլլայ խաղին իրական արժանիքը, գոհացուցիչ է տեսնել որ մէկ տարուան մէջ թատերական այս չորրորդ հեղինակութիւնն է, տեղական կեանքէ առնուած, որ կը ներկայացուի ի Կ· Պոլիս, հայերէն լեզուաւ: Բերայի բարձր դասու պատկանող խումբ մը ազնիւ երիտասարդներու գովելի աշխատութիւնք՝ նպաստած են այս գիշերուան ներկայացման տոմսակներու մեծագոյն մասին սպառման, և կը սիրենք յուսալ որ թատերասէր ազգայինք պիտի փութան գնել մնացեալ օթեակներն ու սրահն ալ պիտի լեցուի: Ինչ որ գրած ենք յաճախ այս օրինակ առթիւներու մէջ, նոյնը կը կրկնենք և այսօր, թէ հասարակութիւնը պէտք է քաջալերող ըլլայ այս կարգի սկզբնական ձեռնարկներուն և համակրանօք ողջունէ զայն:

Վաղը գիշեր ալ, Գատը-գեղի Թատրոնին մէջ, Մնակեան խումբը պիտի ներկայացնէ Տիրան էֆ· Փափազեանի ՆԵՐԿԱՐԱՐԸ:

Ծաղիկ շաբաթաթերթի վաղուան թիւը կը պարունակէ հետեւեալները·

Առաջնորդող յօդուած· փօսիլ մը Ա. Ա· ՍՈՒՐԷՆԵԱՆ.—Մայր եւ Զաւակ ՀՈՎԻՒ·— Բաբիգեան յիշատակը Ա. Ա. ՍՈՒՐԷՆԵԱՆ.—Հրաշագործ. ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ·—Անակնկալ գիւտ մը Կ· Յ. ՊԱՍՄԱՃԵԱՆ·—Գերմանացի Հովուի մը կարծիքն Հայոց մասին· «Նոր-Դար»էն քաղուած·— Մանկավարժական նամականի. Ներդաշնակ.—Դաստիարակութիւն ՍԵՊՈՒՀ.—Հայ Աշուղներ Յ. Յ· ԴԱՐԲԻՆԵԱՆ.—Սիրտը բանաստեղծութի՞ն Ն. ԵՒՏԵՐՊԷ.— Ժողովրդային հանելուկներ Ի. Օ. ՇԱՄԼԵԱՆ·— Ծաղկանց լեզու Գ. Ս.— Կովերու տարբեր ճաշկեր Յ· Մ· ԱՅՆԱՒՈՐԵԱՆ·— Հովահարներու պատմութիւնը Յ· Մ. ԱՅՆԱՒՈՐԵԱՆ·— Տիեզերական մարդահամար Յ. Մ. ԱՅՆԱՒՈՐԵԱՆ.— Մեր հորիզոնէն անդին ԳԷՈՐԳ ԳԻՒՎՊԻՒԼԵԱՆ.—Ազգային, Ներքին եւ Արտաքին լուրեր:

Ծաղիկի տարեկան բաժանորդագինն է 50 ղրուշ: Վեցամսեայ 25 ղրուշ: Դիմել առ Տնօրէն-Հրատարակիչ Յ· Գ· Փափազեան, Կ. Պոլիս, Պահչէ-Գաբու, Շէյխ-Իւլ-Իսլամ խան: 538

Հատը 40 փարա

Նոր հրատարակութիւն
ԶՐՈՒՑԱՏՐՈՒԹԻՒՆ
ԱՐԱԲԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ
Յօրինեաց
ՄԻՀՐԱՆ ԱՐԻԿԵԱՆ
536 Գին 4 ղրուշ 1—3

Վերջին լուրեր

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ. Ականակուռ Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ կրօնական բարձրաստիճան պաշտօնատար Ապիւլհիտա էֆէնտիի և Սէյտ Ահմէտ Խասա էֆէնտիի:

Առաջին կարգի Մէճիտիյէ՝ Վեհ· Սուլթանի սեղնակապետներէն Էմին պէյի:

Երկրորդ կարգի Մէճիտիյէ՝ Պոլսոյ կողմի ոստիկան-զինուորաց երրորդ վաշտին հրամանատար գնդապետ Մէհմէտ պէյի·

ՊԱՍՐԱՅԻ նորընտիր կուսակալ Նաւալին Ֆէրիտ Համտի փաշա երէկ կայս· պալատ գնաց և Վեհ. Սուլթանի հրամանները ստանալէ և կայսերական մեծածիրանւոյ արժանանալէ յետոյ, երէկ իրիկուն իր պաշտօնատեղին ուղեւորեցաւ:

ԴՐՈՇՄԱԹՈՒՂԹԻ օրէնքը՝ Թուրքիոյ մէջ բնակող օտարազգիներու նկատմամբ ալ գործադրելու համար պատրաստուած ծրագրոյն մէջ ի գործ դրուած բարեփոխմունք այս օրերս Բ. Դրան կողմէ դեսպանաց պիտի հաղորդուին և այդ օրէնք երեք ամիս յետոյ գործադրութեան պիտի դրուի:

ՀԱԳԳԸ ՊԷՅ, օսմանեան գօմիսէր Շիքակօի արուեստահանդէսին, չորեքշաբթի իրիկուն Լոնտոն ժամանելով հետեւեալ առաւօտուն այցելութիւն տուեր է օսմանեան դեսպան Րիւսթէմ փաշայի և դեսպանատան պաշտօնէից:

ԱՆԾՈՒԽ ՎԱՌՕԴ· —Կայս. Իրատէ մը հրամայած է որ յատուկ յանձնաժողով մը փորձէ ու քննէ այն անծուխ վառօդն, որ Եւրոպայի գործարաններէ միոյն մէջ պատրաստուած է և կը յարմարի օսմանեան զէնքերուն ամեն տեսակին: Յանձնաժողովը սկսած է գործադրել կայս. սոյն Իրատէն:

—Նոյն գործարանին կողմէ պատրաստուած փամփուշտներէ մաս մը Ճիւրը Մուսթաֆա փաշա բերուած ըլլալով, կայս. Իրատէով մայրաքաղաքս փոխադրուած և յանձնուած են Թնդանօթարանի վերատեսչութեան:

ԹՕՐՊԻՏՕ·— Գերմանիոյ Քիէլ քաղաքի Ճերմանիա գործարանին մէջ կայս· կառավարութեան հաշւոյն շինուելու վրայ եղող երկու թօրպիլահալածներու շինութիւնն աւարտած ըլլալով ծովը իջուցուած և փորձերը կատարուած են: Ուրիշ թօրպիտօ մը շինութիւնն ալ աւարտելու վրայ է:

ՃՕՀՕՐԻ վեհապետ Մէհմէտ խան՝ ընկերակցութեամբ կայս. թիկնապահ Ահմէտ Ալի փաշայի՝ պալատական կառքերով երէկ այցելեց կայս· Թնդանօթարանն ինչպէս նաև Պոլսոյ նշանաւոր վայրերը:

ՀԱՆԳՍՏԵԱՆ ԹՈՇԱԿ·—Կայս· Իրատէի մը համաձայն, տասն և հինգ հազար ղրուշի հանգստեան թոշակ յատկացուած է Հիճազի նախկին կուսակալ Հագգը փաշայի:

ՕՍՄ· ՊԱՏՈՒԻՐԱԿՔ Ի ՀՌՈՄ. —Մաքսային վերատեսուչ Հասան Ֆէհմի փաշա, Բ. Դրան արտաքին թղթակցութեանց քարտուղար Նուրի պէյ և կայս. թիկնապահ Թեւֆիք պէյ, որք ներկայ պիտի գտնուին Իտալիոյ թագաւորին ամուսնութեան քսանհինգերորդ յոբելեանին, Հռոմ ժամանելով ընդունուեր են օսմ· դեսպան Մահմուտ Նէտիմ պէյէ և պալատական ու արտաքին գործոց նախարարութեան պաշտօնէից կողմէ: Օսմանեան պատուիրակութիւնը՝ Մահմուտ Նէտիմ պէյի առաջնորդութեամբ այցելութիւն տուեր է Իտալիոյ բարձրաստիճան պաշտօնէից·

ՊԷՑԼԻԿՃԻ Րաիֆ պէյ հիւանդ ըլլալով շաբաթէ մը ի վեր անկողնոյ կը ծառայէ:

ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒ ՃԱՊՈՆԻ միջեւ առեւտրական յարաբերութեանց հաստատման համար հարկ եղած միջոցները ձեռք առնուած էին: Արդ, օսմանեան առեւտրական թանգարանի վարչութիւնը նկատելով որ Զմիւռնիոյ չամիչի ու թուզի բերքերն կրնան սպառման կեդրոն մը ունենալ ի Ճաբոն, այդ առթիւ տեղեկութիւններ տուած է Զմիւռնիոյ իւր ներկայացուցչին:

ՁՄԵՌԸ· — Սուրիոյ լրագրոյն մէջ կը կարդանք թէ այդ կողմերը ձիւն տեղացած է և սաստիկ ձմեռ կընէ: Դամասկոսի ու Պէրութի միջեւ գտնուած խճուղին ձիւնով ծածկուեր է և մէկ քանի օր երթեւեկութիւնք դադրեր են:

—Գասթամունիի մէջ ալ սաստիկ ձմեռ կընէ և տեղ տեղ ձիւնին բարձրութիւնը մինչեւ քսան հարիւրորդամեդրի հասած է: Երկու կիներ ու երեք աղջիկներ սառեր են:

—Մանասթըրի Կէօրիճէ գաւառին մէջ մարտ 28էն սկսելով չորս օր անընդհատ ձիւն տեղացեր և ջերմաչափը զերոյէն երկու աստիճան վար իջեր է:

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ վարժարանի դասախօսութիւնք, որք Րամազանի առթիւ դադրած էին, վաղը պիտի վերսկսին:

ՎՃՌԱԲԵԿ ատենի անդամներէն Իպրահիմ պէյ, որ Գօնեայի ու Այտընի նահանգաց դատական գործերը քննելու համար այդ կողմերը գնացած էր, իւր պաշտօնն աւարտած ըլլալով՝ մէկ քանի օրէն մայրաքաղաքս պիտի դառնայ:

ՊԵՏԱԿԱՆ Խորհուրդն որոշած է որ ոստիկանութեան առաջին կարգի գօմիսէրներուն՝ Սանիյէի երկրորդ աստիճանի, երկրորդ կարգիններուն՝ Սալիսէի և երրորդ կարգիններուն ալ Րապիաի աստիճանի համապատասխանող տիտղոս տրուի:

ԻԶՄԻՐԷՆ կը հեռագրեն թէ երեքշաբթիէն չորեքշաբթի լուսնալու գիշերը, Տիլավէր անուն չէրքէզ մը իր չորս զաւակներն յօշոտեր է տապարի հարուածներով: Ոճրագործը ձերբակալուած է:

ԽԱՀՈՒԷՅԻ գինն զգալի անկում մը կրեր է յԵւրոպա:

ՈԶԽԱՐՔ.—Միջերկրականի նաւահանգիստներէն երէկ մայրաքաղաքս բերուեցան երկու հազարէ աւելի ոչխարներ:

ՎՐԷԺԽՆԴԻՐ ՏԱՐՓՈՒՀԻՆ.—Ընթերցողք թերեւս յիշեն թէ անցեալները, Քանկալթի բնակող Քաթինա անուն կին մը, որուն երիկն էր Սիվա անուն մարդ մը, իր Եանքօ անուն տարփաւորին հետ խոյս տուած էր տունէն՝ եղածը չեղածը կողոպտելէ ետք, և իր հինգամեայ աղջկանը հետ գացած էր Գում-գաբու քրոջը տունը, ուսկից եւս մեկնած էր քսան ոսկիի մօտ գումար մը գողնալով: Արդ, խեղճ Սիվա, որ երկար ատենէ ի վեր խուզարկութիւններ կը կատարէր ամեն կողմ առանց յուսահատելու, անցեալ օր վերջապէս ձեռք կը ձգէ իր անամօթ կինն հետեւեալ պարագայից մէջ·

Ատենով, յիշեալ Եանքօն սիրային յարաբերութիւն ունէր Րէճինա անուն յոյն կնոջ մը հետ, որ՝ հաւատալով անոր սիրոյն՝ իր ունեցածը չունեցածը կը ծախէ կը ծախծխէ՝ Եանքոյին ձեռքը դնելու համար· օրին մէկն ալ բան մը չի մնար ծախելու: Եանքօն չիկայ· նենգամիտ սիրահարը, տեսնելով որ դրամին աղբիւրը ցամքած է, կը հեռանայ և իր յարաբերութիւնը կը շարունակէ խեղճ Սիվաին կնոջը հետ: Այն ատեն Րէճինա, կատղած, վրէժ կուզէ լուծել և, կնոջական սուր հոտառութեամբ, կը գտնէ խաբեբայ սիրահարին բնակարանն ու իմաց կուտայ Սիվաին· խեղճ մարդը շունչը հոն կ՚առնէ զաւա՜կս պոռալով, զոր վերջապէս կը գտնէ: Հիմակ դատ բացեր է անոնց դէմ:

ՀԷՔԵԱՐԻԻ նախորդ կառավարիչ Իպրահիմ Քեամիլ փաշայի հանգստեան թոշակ յատկացուած է:

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ Դրամատան քննիչներէն Հասան Թէվֆիգ էֆ· երէկ Զմիւռնիա ժամաներ է, Այտընի նահանգին մէջ գտնուած երկրագործական Դրամատան սնտուկներու գործառնութիւնները քննելու համար:

ԽԱԼԻԼ ՊԷՅ, դեր-տնօրէն կայս· Թանգարանին, երէկ Զմիւռնիա ուղեւորեցաւ, նոյն նահանգին մէջ գտնուած հնութիւնները մայրաքաղաքս բերելու համար:

ՐԷԺԻԻ վարչութեան էնկիւրիի հասոյթք, կըսէ Սապահը, երկու տարուան մէջ քսան հազար ոսկիոյ աւելցութիւն մը ունեցած են:

ԱՐԿԱԾՔ.—Առջի օրը Սիրքէճիի նաւամատոյցէն բաժնուող նաւակ մը շրջելով մէջը գտնուող մարդ մը, կին մը ու երկու փոքր աղջկունք ծովը ինկան, սակայն անմիջական օգնութեանց շնորհիւ ազատուեցան:

—Գասթամունիի Արաճ գաւառակին մէջ ցաւալի արկած մը պատահած է: Երկու հովիւներ՝ երկուքն ալ տասն և չորս տարեկան՝ իրենց արածած 170 ոչխարներն իրիկուան ժամուն գիւղին մօտ գտնուած փարախ մը տանելէ յետոյ կրակ վառեր են տաքնալու համար և սկսեր են քնանալ, սակայն այդ կրակէն փարախը բռնկեր և հովիւներէ մին ու ոչխարներն բոցերուն մէջ մնալով այրեր են: Միւս հովիւն յաջողեր է ազատիլ:

—Դամասկոսէն ի Հօրան շինուելու վրայ եղող Թրամուէյի գծին վրայ՝ քար փոխադրող երկու կառքերու միջեւ ընդհարում մը տեղի ունենալով, այդ երկու կառքերուն մէջ գտնուող քսան գործաւորներէ երեքը մեռեր եւ հօթն ալ վիրաւորուեր են:

ՊԱՀՐԸ ՍԷՖԻՏ լրագիրը կը ծանուցանէ թէ Արշիպեղագոսի Քարբաթօս կղզւոյն գայմագամ Օհաննէս Ֆէրիտ էֆէնտի իր պաշտօնավարութեան միջոցին յարատեւ աշխատութիւն ցոյց կուտայ: Որոշուեր է կղզւոյն Պիկատիա անուն ծովեզերեայ տեղը կառավարական նոր պաշտօնատուն մը կառուցանել: Առ այս, տեղացի յոյն երկու բարերարներ իրենց երախտագիտութեան մէկ արտայայտութիւնը ըլլալու համար, նոյն շէնքին կառուցման ի նպաստ 75 օսմ. ոսկի նուիրած են և գրաւորապէս խնդրած են գայմագամ Օհաննէս Ֆէրիտ էֆէնտիէն, որ իրենց սոյն նուէրը ընդունելի ըլլայ:

ՕՍՄ· ՊԱՆՔԱՅԻ Պէրութի մասնաճիւղը 70,000 ոսկւոյ փոխատուութիւն մը ըրեր է Պէրութի և Հալէպի կուսակալութիւններուն:

ՎԷՐՏԻ ԹԱՏՐՈՆԻՆ համար վերջերս զրոյց շրջած էր թէ պէտք եղած ամրութիւնը չունի այդ հին շէնք: Հանրային ապահովութեան վերաբերեալ այս խնդիրն իր լուծումն ստացաւ նախընթաց օր: Ծանօթ ճարտարապետ Վալօռի, ֆրանսական դեսպանատան ճարտարապետ Պ· Բէրբինեանի և Հանրային Պարտուց վարչութեան ճարտարապետ Պ· Թաւլէ յիշեալ թատրոնն երթալով, ուշադրութեամբ և խնամով քննեցին շէնքը և յայտարարեցին թէ վտանգաւոր բան մը չունի: (Մօնիթէօր)

ՓՈՐՁԱՆՔԸ ՓՈՐՁԱՆՔ ԿԸ ԲԵՐԷ. — Եօմէր աղան շաքար կը ծախէ ի Պէյլէրպէյ և գոհ է իր վիճակէն· բայց, ինչպէս ամեն մարդ ունի չհագենալութեան զգացումը, Եօմէր աղան ալ՝ Պայրամի առթիւ· կ՚ուզէ քիչ մը աւելի փարա վաստկիլ· ուստի 80—90 օխա շաքար կը գնէ և աչք շլացնող եղանակով կը շարէ զայնս խանութին մէջ, ու սիկառը վառելով կը նստի անոնց դիմացը, «քէֆ» ընելով· բայց կ՚անցնին կը դառնան, կը նային, լեզունին կը շարժեն ու կը հեռանան, առանց Եօմէր աղային շաքարներուն համը նայելու: Պայրամի օրերը կը լմննայ, բայց Եօմէր աղային շաքարները չեն լմննար: Վերջին գիշերը Եօմէր աղային զայրոյթը չափ ու սահման չունէր· իր թափը Զէնկէլքէօյի մէկ գինետունը կ՚առնէ, և այնքան կը խմէ որքան կրնային պարունակել փորն ու ստամոքսը· յետոյ, գլտորտկելէն խանութ կը դառնայ՝ անէծք անէծքի վրայ տեղալով: — Գիշերը, մարդուն մէկը հետաքրքրութեամբ կը մօտենայ Եօմէր աղայի խանութին, որուն դուռը բաց էր, շաքարին տեսքէն քիթը կը խտղտայ, ներս կը մտնէ, շաքարի շուայտութիւն մը, քանի մը հատ կուտէ, նորէն կ՚ուտէ մինչեւ որ կը հասնի գզրոցին առջեւ, զոր կը բանայ և իր մատներն, որք շաքարներու հպումէն մածուցիկ եղած էին, կը փակչին Եօմէր աղային ստակներուն, ինչպէս թռչունը կը փակի ստուին· վերջապէս վաթսուն ղրուշ և քանի մը օխա շաքար բեռցած, մարդը կը հեռանայ՝ շատ գոհ իր այցէն:

Յաջորդ առաւօտուն արթննալով ի՞նչ կը զգայ Եօմէր աղան· ա՛լ դուք երեւակայեցէք:

ՀԵՌԱԳԻՐ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՀՌՈՄ, 20 Ապրիլ.—Գերման Կայսրն և Կայսրուհին կայարանին մէջ ընդունուեցան Թագաւորին և Թագուհւոյն և Իտալացի արքայազանց կողմէ: Յոյժ սիրալիր կերպիւ ողջունեցին զիրար: Մեծ բազմութիւն կեցցէներ արձակեց: Հռոմայ ընկերութիւնք արքայական պալատան առջեւ համակրալից ցոյց մ՚ըրին: Նոյնին վեհափառութիւնք, պատշգամէն երեւնալով բազմութեան, շնորհակալութիւն յայտնեցին իրենց թաշկինակները կամ սաղաւարտները շարժելով:

ՊԵՐԼԻՆ·— Կայսերական պաշտօնաթերթը կ՚ողջունէ Հռոմայ հանդէսներն, և Կայսեր ու Կայսրուհւոյն այցելութիւնը գրաւական մը կը նկատէ Իտալիոյ և Գերմանիոյ մտերմական կապին:

ՎԻԼԼԱ ԲԻԱՆՈՐԷ·—Այս առաւօտ կարգուեցաւ Պուլկարիոյ իշխանը Պուրպոնեան Մարի Լուիզ իշխանուհւոյն հետ, ի ներկայութեան նշանաւոր հրաւիրելոց:

ՓԵԹԵՐՍՊՈՒՐԿ· — Նաթալի թագուհի հրաժեշտի ողջոյնը մատոյց Զարին, որուն հետ ճաշեց, և ապա ճամբայ ելաւ, Պելկրատ երթալու համար: Անգլիոյ դեսպանը Խրիմ գնաց, (Զարին քով):

ՊՐՈՒՍԷԼ· — Ընդհանուր քուէարկութեան վրայ ներկայացեալ առաջարկին ընդունելութիւնը շատ հանդարտեցուցիչ ազդեցութիւն ըրաւ: Հանգիստ վայելող զանազան բանուորներն իրենց գործերը շարունակելու վրայ են նորէն:

ԳԱՀԻՐԷ.—Նախարարապետն հրամայեց ոստիկանութեան վերատեսչին և իւր ստորադաս տեսուչներուն թէ պատասխանատու են հանրային բարեկարգութեան: Գաւառաց մէջ կառավարիչք պատասխանատու են, և պարտին տեղեկագիր ուղղել ոստիկանութեան վերատեսչին:

Սակարան

ՂԱԼԱԹԻԱ, 9 Ապրիլ

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԱՑ

3 ամիս Լոնտրայի վրայ		110 3/8
3 » Փարիզի		22 77 1/2

ՕՍՄԱՆԵԱՆ ՓՈՆՍՈԼԻՏԷ

Եօլ. երկիւյ զոց. (Միւթ· Դ· Սէրի)		24 22 1/2
Բերայի մէջ		— —
Առաւօտուն բացուելուն		24 21 1/2
Կէս օրին		24 21 1/2
Թահվիլաթը Օսմանիյէ երէկ իրիկուն		— —
» ժամ 5ին		— —

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Խալա· ան Ֆիւն	Սէրի	56 75
»		34 50
»		25

[illegible]

Սօսիէթէ Ժէնէրալ	Ոսկ· Լի·	5 20
Քրէտի Ժէնէրալ	»	8 03
Պանք տը Փօնս		4 34
Օսմ. Շամէ է վաւ.օր·	»	4 32
Րէժի	Օսմ. Ոսկի	16 24
Թրամուէյ	»	585
Օսմ. Ապահովագր. Ընկ·	»	507 1/2
Րումէլիի Երկաթուղի	Ֆր·	92 3/4
Բաժնեթուղթ Լաւրիօնի		66

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

ՓԱՐԻԶ, 20 Ապրիլ

Ֆրանսական Ռանթ 3 %	96 45
» » 4 1/2 %	107 05
Օսմանեան փոնսոլիտէ Սէրի Դ.	22 35
Օսմ. մաքս. արժեթուղթ	483 75
Բրիօրիթէ Թիւքը (1890)	438 75
Օսմանեան Երկաթուղի	92 62
Րէժիի բաժնեթուղթը	379 37
Պանք Օթօման	604 37
Քրէտի Լիոնէ	763 75
Իտալական Ռանթ 5 %	93 22
Եգիպտական միացեալ	509 06
Չէք Լոնտրայի վրայ	25 140
Օսմանիյէ Օսմանեան փոնսօլիտէ	389 06

ԼՈՆՏՐԱ, 20 Ապրիլ

Անգլ· փոնսօլիտէ	99 18
Օսմ· » Սէրի Դ.	22 06
» » » Ա.	56 75
» » » Բ.	34 50
» » » Գ.	23 50
Օսմ· փոխառութիւն 1871	98 50
Փոխառութիւն 1877 (Տէֆանս Լօն)	95 75
Պանք Օթօման	14 06
Այտընի երկաթուղի	16 50
Դասապայի երկաթուղի	15 50
Եգիպտական միացեալ (Իւնիֆիյէ)	401
» առանձ. (բրիվիլէժիէ) 1890	— —
Տօմանիալ (փոխառ. Թուրքիոյ)	104 50
Փոխանակութիւն Փարիզի վրայ	25 32 1/2

ՎԻԷՆՆԱ, 20 Ապրիլ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	122 55
» Փարիզի	48 60
Օսմանեան Րէժիի բաժնեթուղթը	183 50
» Երկաթուղի	51 90

ՓԱՐԻԶ ՓԹԻԹ ՊՈՒՐՍ

ՓԱՐԻԶ, 21 Ապրիլ

Ֆրանսական Ռանթ 3 %	96 45
Եգիպտական միացեալ	— —
Օսմ· փոնսօլիտէ Սէրի Դ.	22 30
Օսմ· երկաթուղի	— —
Օսմ· Րէժի	— —
Օսմ· մաքս. արժեթուղթ	— —
Բրիօրիթէ Թիւքը	— —
Պանք Օթօման	603 12
Օսմանիյէ	— —

ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Ս· ԱԲՐԱՀԱՄ ՎԱՆՔԸ

Չորեքշաբթի օրը Անգղայ Ս· Աստուածածին վանքի մասին քանի մը տող բան գրեցինք: Ս· Աբրահամն ալ Ս· Աստուածածնէն ոչ այնչափ հեռու վանք մըն է· հետեւաբար կարգը իրենն է այսօր:

Վանի նահանգի Ջոր գաւառակի արեւելեան հարաւակողմը ամբողջովին ծածկուած է երկար լեռնաշղթայով մը որ կը սկսի Անգղայ կամ Խոշապայ գետի ափունքներէն և կը ձգուի մինչեւ Շամիրամայ գետի ակունքները՝ Շատախի և Ջորի սահմանագլխին վրայ: Այդ լեռնաշղթայի մի կատարի վրայ, նորա մէջ զառիվերէ մը յետոյ, լեռան գլուխը, տափարակ տեղի մը վրայ, հանդարտօրէն նստած կը տեսնուի այդ վանքը, մինչ լեռնաշղթան կը շարունակէ իւր օձապտոյտ մարմինը ձգձգել և պաշարել իւր շրջակայքը: Դալարագեղ մարգագետին մը իւր կանաչ, աղուոր օթոցը կը սփռէ վանքի առջեւը: Եւ աղբիւր մը, որ բնութեան սքանչելի մէկ անօրինութեամբը միշտ անպակաս կը գտնուի այդպէս տեղերը, իւր հեզասահ ալիքները ծիրայու վրայ կը թաւալէ երկայնագլուխ խոտերու տակէն: Վանքէ քիչ մը վար, զառիվայրին վրայ, կը գտնուի ծառերու մշտադալար շարք մը· և շրջակայ հողեր ու արտերն ալ վանքի սեփականութիւնն են:

Հիմակ տեսնենք աւանդութիւնը:

Անյայտ տարիներ առաջ Աբրահամ անունով մի մարդ այլ եւս աշխարհիս կեանքէն ձանձրացած կ՚որոշէ ձեռք քաշել անկից, լեռներն առանձնանալ և ճգնիլ: Կ՚ելլայ կուգայ այդ լեռան գլուխը և հոն կը մտածէ ճգնարան մը հաստատել իրեն համար: Կը հագնի քուրձեր, գլուխը բաց ու ոտք բոբիկ, ինքը միս մինակ քար, փայտ, շաղախ եւն· ամենն ալ սա սարէն ու նա ձորէն կը ժողվէ, ամիսներով, տարիներով կ՚աշխատի, մէկ-երկու կտոր տնակ կը կառուցանէ այդ բարձանց վրայ, մէջը կը մտնայ և կ՚սկսի ճգնիլ: Այդ Սուրբին անունը ժառանգութիւն մնացած է վանքին, որ նոյն իսկ իւր շինած տնակներն է:

Ս· Աբրահամ կը ձեռնարկէ նոյնպէս տնկել այն ծառերը որք հիմայ լեռան զառիվայրին վրայ երկար շարք մը կը կազմեն: Աւանդութիւնը կ՚ըսէ որ տեսակ տեսակ անդիմանալի չարչարանքներով ու նեղութիւններով այդ ծառերը գտնելէն, բերելէն, տնկելէն յետոյ՝ Ս· Աբրահամ ձեռք կ՚առնէր կողովները ամեն օր, կտրելով երեք չորս ժամուան ճանապարհ, միշտ քրձազգեստ և բոկոտն, լեռնէն վար իջնալով կը հասնէր Անգղայ գետի ափը, հոն ջրով կը լեցնէր իւր կողովները, և նորէն նոյն ճամբով կը վերադառնար իւր սիրելի ծառերուն քովը, զանոնք իւր կողովներու ջրերովը ոռոգելու համար: Աւանդութիւնը կը զմայլի այս սուրբ հոգւոյ արդարութեան վրայ որ կողովով ջուր կը տանէր ու չէր թափուէր: Գեղացի մամիկները տեսնելու է թէ, ի լուր Ս· Աբրահամի անուան, ինչպէս ձեռքերնին կը կցեն և սրտաբուխ հառաչներով անձերնին մատաղ կ՚ընեն նորա գերահրաշ արդարութեան· գեղջուկը նոյն կրօնի պաշտօղն է միշտ, վասն զի կրօնք յիշեցնող այս տեսակ բաները միշտ իւր սրտին ու ականջին մօտ են:

Ձորի մէջ խոշոր քար մը կայ տնկուած որոյ գագաթը մեծկակ խաչ մը փորուած կայ: Ամեն մէկ անցորդ կը վերցնէ գետնէն պզտիկ քար մը և ժայռին գլուխը կը նետէ· խաչի մէջ ինկաւ՝ աղէկի, բարիի նշանակ է: Նոյնպէս ամեն ոք այդ ժայռի քովէն անցնելուն՝ կը մօտենայ և ամենայն ջերմեռանդութեամբ քամակը քանի մը անգամ քարին կը զարնէ որպէս զի ամբռնայ: Աւանդական սովորոյթներ ամեն բանէ աւելի կը պահուին գեղջուկներու մէջը· Այդ այն քարն է եղեր, որու կռթնելու համար ամեն օր Ս· Աբրահամ սարի գլխէն ձորը կ՚իջնայ եղեր և հոն յենլով, շուրջը տիրող անհուն ամայութեան մէջը, կը կարդայ եղեր իւր անհատնում խոկմունքները:

Երկու խօսք ալ վանքի այժմեան վիճակի վրայ: Վանքը հիմայ փլփլած, քայքայուած բան մըն է, տարին մինչեւ գլուխ ամայի լեռան վրայ անտէր անտիրական մնացած: Իւր շրջակայքը գտնուած սեփականութիւնները Խէք գիւղացւոց ձեռքը վարձու են, որոնց այդ անտէր վանքին հետ ինչպէս վարուելնին ալ մեզ յայտնի չէ· անասուններ արդէն չ՚ունի, և եթէ տարին մէկ անգամ, Հոգւոց վանք կամ այլուր երթացած ժամանակ, ուխտաւորներն այս վանքին ալ ճամբու վրայ ըլլալուն համար այցելութիւն մը ընեն, այն ալ մե՛ծ բան մըն է այդ լքեալ վանքին համար· երբեմն ալ, տարին հազիւ անգամ մը, վանքին յատուկ ուխտաւորներ կուգան: Այս պարագային մէջ շրջականներէն կը վազեն կուգան մէկ քանի քահանայներ, մէկ—երկու օր կը պատարագեն, հասոյթը կը ժողվեն, և բազմութիւնը քաշուեցաւ գնաց մի, իրենք ալ նորէն կը ձգեն կ՚երթան իրենց տեղերը, թողլով վանքը իւր չոր մինակութեան մէջ, այդ լերան գլուխը, մինակուկ իւր շրջակայ լերանց հետ դրացի, առանց կղերի, առանց նոյն իսկ պահնորդ մշակի մը:

Հ· Ե· ՆԱՐԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հոգաբարձութիւնս շնորհակալութեամբ կը հրատարակէ հետեւեալ բարեգութ տեարց տարեկան նուէրներն, մինչ վերջ փետրուարի․

Բարեպաշտ ոմն 1080 ղրշ․ Սարգիս Թաշճըեան 864 ղրշ․ Յովսէփ Գավաֆեան (գործարանատէր) 864 ղրշ․ Բ․ Տ․ Մ․ Մանուկեան 864 ղրշ․ Յ․ Մ․ Գ․ Շամտանճըեան ընկերք 864 ղրշ․ Բուլճեան Ճէզվէճեան և Արապեան 864 ղրշ․ Ա․ և Խ․ Խորասանճեան 864 ղրշ․ Մանուկ Արզըեան 864 ղրշ․ Գառնիկ Մանուկեան 648 ղրշ․ Յարութիւն Տիլսիզեան 540 Յարութիւն Գըննաճեան 540 Պ․ և Ս․ Աստարճեան 540 Յ․ Կ․ Բապուճճեան 432 Վ․ և Ե․ Կիւմիւշճեան 432 Յովակիմ Իսթամպօլլուեան 432 Գրիգոր Էվրէնեան 432 Միհրան և Արմենակ Մանուկեան 432 Մկրտիչ Այշըճեան 432 Գառնիկ Սարգիսօֆ եւ եղբարք 432 Համբարձում Թորոսեան 432 Իսագուլեան և Եավրուեան 324 Անդրէասեան և Գասպարճեան 270 Մկրտիչ Ֆէրմանեան 216 Գրիգոր Մէրտինեան 216 Բարթիկ Մատիկեան 216 Յ․ եւ Ց․ Սամանճեան 216 Թ․ Ե․ Գարակէօզեան 216 Կարապետ Թիլիաքեան 216 Գըլըքճեան եւ Ջըրուանդեան 216 Յովհաննէս Մանխալըեան 216 Գրիգոր Պարտիզպանեան 216 Բարսեղ Խուպէսէրեան 216 Աւետիսեան եղբարք 216 Գրիգոր Նաքքաշեան 216 Խաչիկ Սարաճեան 216 Յակոբ Մուրատեան 216 Մէյմարեան եւ Յակոբեան 216 Յովսէփ Սըրըմ 216 Կ․ Ինճիճեան որդիք 216 Յակոբ Աճառեան 108 Էպէեան եղբարք 108 Ճէնազեան եղբարք 108 Յովհաննէս Քէլէկեան 108 Կիւլէսէրեան եղբարք 108 Յարութիւն Կարագեան 108 Օգսէն Քիւրքճեան 108 Պօղոս Էքսէրճեան 108 Գէորգ Պօհճալըեան 108 Յարութիւն Քօյօյեան 108 Մանուկ Կարագեան 108 Գրիգոր Խնամիրեան 108 Սարգիս Սիմոնօֆ 108 ղրշ․ Համագումար ընդ․ դրամ 18522։

Ի դիմաց Հոգաբարձութեան Ազգ․ Հիւանդանոցի

Վաւ․ Ատենադպիր Վաւ․ Ատենապետ
Օ. ԹԱՊՈՒՊԵԱՆ Բ. Ց. ԻՍԹԱՆՊՕԼԼՈՒԵԱՆ

ՍԵՐ

Թերեւս ուշացուցի խոստացեալ դարմանն այն համաճարակին որ մեր հայ փափուկ և տկար սեռին սրտերուն մէջ տիրած է։

Սըբիթմէնս, Լօնտոնի բժշկական վարժարանի նախկին տնօրէնն, մարդկութեան կենաց հետ առնչութիւն ունեցող հոգեկան բարձր պայքարներու վրայ 6 հատորներէ բաղկացեալ ընդարձակ աշխատութիւն մը ունի «Կենաց պայքարները» անուամբ․ ամէն մէկ հատորը կը պարունակէ 500-550 խոշոր էջեր և այս վեց հատորները կազմող պատուական գործը 22 տարուան մէջ 87 անգամ տպագրուած է․ կրնաք հասկընալ թէ որքան սքանչելի և պատուական հեղինակութիւն մ'է․ և չի կարծեմ որ Եւրոպիոյ մեծ քաղաքաց մէջ հրատարակուած գիրք մը միայն 500 և կամ 1000 հատ կը տպագրուի, այնպէս կ'ըսեն թէ Սըբիթմէնսի այս գործին ամէն մէկ տպագրութիւնը 25 էն 30 հազար օրինակ էր։

Թէ ի՞նչպէս և ի՞նչ միջոցներով կրնանք կասեցունել այս իմ՛ մատնանիշ ըրած մոլութեան ընթացքն, և թէ նոր սերունդը գէթ այս չարիքէն ազատ պահելու միջոցներն որո՞նք են, ո՞րն է այն բալասանն որ հոգւոյ վրայ դրուելով՝ մեղմէ պիտի վերնոյ այս աղէտաբեր հիւանդութիւնն։

Ֆիզիքական խանգարումով տառապող հիւանդը դարմանել, ամոքել անոր ցաւերն և դառնութիւններն՝ արդարեւ շատ դիւրին է քան հոգեկան սրտաճմլիկ տագնապներ ունեցող ամբողջ ընտանիքներ բարոյական ճամբու մէջ դնելու ջանալ․ եւ ես անձս այս մեծ մոլութեան փրկութեան համար միջոց մը ցուցնելու անկարող նըկատելուս՝ հռչակաւորն Սըբիթմէնսի «Կենաց պայքարները» հեղինակութենէն իմ նիւթիս շուրջ մասերն համառօտ կերպիւ միացունելով կը յանձնեմ ձեր խորին ուշադրութեան և կը յուսամ թէ այս մեծ հանճարին գաղափարները շատ աւելի հետաքրքրութեամբ կը կարդաք, որով թէ՛ խնդիրն պարզուած կ'ըլլայ և թէ դուք միանգամայն ծանօթացած կ'ըլլաք այս մեծ մարդուն հետ։

«Ո՛ր կողմ երթանք, որ երկիր որ ակնարկ մը նետենք, հոն աղքատութիւնը պատկերացած կը տեսնենք։ Ինչպէս հարուստ և վաճառաշահ քաղաքներ, նոյնպէս եւ խեղճ և աղքատութեան մէջ տոգորուած ամբողջ երկիրներ կան, այս կացութիւն աշխարհիս թերեւս սկիզբէն նմանօրինակ է․ ո՛ր երկրի մէջ որ բաղդատմամբ շատ աւելի քաղաքակրթութիւնն իւր ազդեցութիւն ցոյց տուած է, հոն եւս մոլութիւն մը, հոն եւս հոգեկան չարիք մը պիտի նշմարէք․ չենք կրնար ըսել, թէ այլեւս այս երկիր բոլորովին զուրկ է բարոյական ամէն մոլութենէ, և եթէ ըլլայ իսկ, մի՛ հաւատաք, զի այս բան խիստ փաղանցիկ էր։

«Կը կարծէք թէ բարոյական մոլութեանց և գեղխութեանց համար քաղաքակրթեալ աշխարհն ամէն տարի նորանոր միջոցներու հետամուտ չի լինիր և մեծ դրամներ չի վատներ այս գործին համար․ կրնամ ըսել թէ այս հոգեկան եղող մոլութեանց համար ծախսուած դրամին չափն ու քանակութիւնը շատ մեծ է։

«Ո՞րն է բարոյականի ուժերն և վերջապէս ի՞նչ միջոց գտած են այս մոլութիւններն աշխարհէն գէթ քիչցունելու համար։ Ձե՞ք հաւատար, երբ լրագրաց մէջ կարդաք թէ ամբողջ քաղաք մը ձիւնակոյտերու փլատակաց տակ բնակիչներով աւերակ դարձած է, դարձեալ չե՞ք հաւատար․ տեսած էք ձիւնն որքան տկար կերպիւ վերջն վար կ'իյնայ և այդ ձիւնէն ո՞վ կ'երկնչի, մանուկն իսկ ի տեսիլ անոր կը հրճուի․ չէ՞ք լսած ահագին ոյժ ունեցող փայբուշարժներուն խորտակումն այն ձիւներուն առջեւ․ ամբողջ մարդկութիւնն բարձր դիրքի մէջ պահելու համար ամէն լուսաւորեալ երկիրներ իրենց դպրոցներուն մէջ կրթութեան՝ այսինքն բարոյախօսութեան պէտքը զգացին․ ահա մարդկութեան միտքն ու հոգին ամէն տեսակ զազիր ապականութենէ զերծ պահող ամրութիւնն և այս փոքրիկ կարծուած աշխատութեամբ է միայն որ ընդհանուր մարդկութիւնը շատ աւելի բարձրացած և զարգացած է քան առաջներն․ և կը կարծէք թէ այս ձեռնարկին համար տարեկան քիչ դրամնե՞ր կը վատնուին։

«Բանիւ դարմանալի է այս կրթութեան զօրութիւնն և ազդեցութիւնն․ արեգական մէկ անզօր ճառագայթին խաւարին վրայ ունեցած հզօր զօրութեան մասին գաղափար ունինք․ կրթութիւնն եւս նոյնն է բարոյական չարիքներուն նկատմամբ եւ թերեւս ալ աւելի զօրեղ է և ազդու։ Մեծ ազգերն իրենց ամէն մէկ հրաշալիքներ եւ բարիքներ իւրենին անզօր և ոչինչ կարծուած այս կրթութեան կը պարտին։ Ամէն տեսակ մոլութեանց դարմանը միայն կրթութիւնն եղած է. երեւակայեցէք ամենաքստմնելի ոճիրներն, տեսակ տեսակ գողութիւններ, աւազակութիւններ, միայն կրթութեան պակասութեան արդիւնք են․ ազգերու հին և զազիր սովորութիւնք, քաղաքներու, գիւղերու ապականեալ ունակութիւնք, ընտանեկան մթին ու փտանգաւոր գաղափարներ և բարքեր այն վսեմ գործին, կրթութեան պակասութենէն չե՞ միթէ յառաջ եկած։

«Բարոյական տեսակէտով որ խնդրոյ վրայ որ կուզէք, ակնարկ մը միայն նետել բաւ է՝ հասկընալու համար կրթութեան մեծ ազդեցութիւնն։ Առանց այս զօրութեան ի՞նչ է մարդկութիւնը, զազիր զանգուած մը միայն. ի՞նչ է մարդ երբ այս աշխարհներն իւր ազդեցութեան տակ առնող գաղափարային դիւթիչ ազդեցութիւնն իւր մէջ չի կրէ։ Ձեմ կրնար երեւակայել աւելի մեծ ազդեցութիւն մը քան այս՝ որ մարդուս մէջը հոգեկան մեծ փոփոխութիւններ յառաջ կը բերէ․ այն ոչինչ կարծեցեալ գործին շնորհիւ մանկլոտիք՝ դպրոցաց մէջ նոր և բոլորովին տարբեր հոգիներ և սըրտեր կ'ըզգենուն․ և այս պզտիկները կրթութեան շնորհիւ բարոյական աշխարհն կը բարուքեն և մոլութեանց, գեղխութեանց ու վատթար բարքերու տեղ, պարզութիւն, ազնուութիւն և մաքուր կենցաղ մը կը դնեն։

«Այն ազգեր ու երկիրներ, որոնք իրենց դպրոցներուն մէջ ուժ տուին եւ լուտան այս մեծ պէտքին, այն ազգեր և երկիրներ շահեցան և պիտի շահին։

«Ամուսնական խնդիրն ամէն երկրի եւ ամէն ազգերու մէջ մեծ և գլխաւոր դիրք մը կը բռնէ, զի ամբողջ աշխարհի հասուն մարդոց կէսէն աւելին գրեթէ ամուսնացեալ են, ըսել է թէ երբ այն կապը լաւ կացութեանց մէջ հաստատեալ ըլլայ, ամբողջ աշխարհի բնակչաց գրեթէ կէսին բարոյական կենցաղն ապահովեալ պիտի ըլլայ։

«Բանիւ ծանր է այն կապակցութեան շղթաներու կշիռն, երբ երկու ամոլ չեն երջանիկ, երբ չունին ընտանեկան հոգեկան անդորրութիւն։ Ի՞նչ է Սիպերիոյ աքսոր մը, ի՞նչ կարեւորութիւն ունի 101 տարուան շղթայակապ աշխատութիւն մը բաղդատմամբ մէկզմէկու վրայ ճշմարիտ սէր չի տածող երկու ամուսիններու կենաց․ աւելորդ է ըսել թէ ամուսինք, ըլլան հարուստ և կամ աղքատ, երբ կը սիրեն մէկզմէկ, նոյն տան վիճակն բոյն անդորրութեան և խաղաղութեան է։

«Ինչպէս ըսի վերն, ամէն հոգեկան եղող ցաւերու և վիշտերու դարմանն կըրթութիւնն է։

«Բայց մի կարծէք երբեք թէ կրթութեամբ բնաւ ընտանեկան յարկի մը մէջ կռիւ, խռովութիւն չի պիտի պատահի ըսել կուզեմ։ Գիտեմ, եթէ երբեք այսպէս ալ ըսեմ դուք հաւատալու չափ միամիտ չէք։ Եւ ոչ մէկ բարոյական խանգարում բոլորովին ապաքինուած ունեցած է, միայն չափաւորուած և մասամբ ամոքուած են։ Մի քանի ժամերու մէջ հըրդեհն ըրած աւերանները տեսած էք․ այդ աւերակ դարձած շէնքերու վերաշինութեան համար կը կարծէք թէ մի քանի ամիս, մի քանի տարի բա՞ւ է։ Ազգերու, ընտանիքներու բարքեր պզտիկ պատճառներով շատ քիչ ժամանակի մէջ կապականին կը վատթարանան, այս ապականման յառաջացումը կասեցունել խիստ դժուարին է։

«Տարիներու կարօտութիւնն կայ սուղ ժամանակի մէջ երեւան եկած բարոյական համաճարակի մը առաջքն առնելու համար։

«Ճշմարիտ սէրն երբ չի տիրապետէր ամուսնութիւն բաղձացողներուն քով եւ փոխան ասոր կը տածեն նիւթական և վաղանցիկ եղող ու եւ իցէ ակնկալութիւններ, ասոնք բացարձակ հաճութեամբ կը բանան ազգի ազգի չարեաց իրենց հոգեկան հանգստութեան և անդորրութեան դռներն, որոնք գալով աւերակ կը դարձունեն․ այս զազիր և վատ մոլութեան աշխարհի բրած չարիքներուն վրայ յաճախ խորհած եմ, այո՛ ակամայ խորհած եմ ընտանեաց վիշտն անդորրութեան և երջանկութեան ոգին խլող այս ճիւաղին վրայ, և ինչպէս միւս մոլութեանց ասոր եւս իբրեւ միակ դարման շատերուն նման ես ալ կրթութիւնն գտած եմ։

«Պզտիկ մանչուկն ինչպէս նաեւ պզտիկ աղջիկն պէտք է կանուխէն հասկնայ թէ ամուսնութիւնն սուրբ է, թէ ամուսնական կապակցութիւնք նիւթական աշխարհին վերաբերող իրերուն հետ խառնելով, սրբապղծել է․ եթէ այս մաքուր գաղափարը միայն կրթութեան հզօր և կենսատու զօրութիւնը կրնայ տալ մանկտոյն։

«Ձեր դարման չափահասներու այս մասին։

Ահա Սըբիթմէնսի գաղափարներն․ օգտուեցէք, և գիտցէք թէ գէշ մոլութիւն մը մէկու մը հաճելի չէ։

Սիրքէճի Ս. Գ.

ՏԱՐԵԻՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՆՐԱԿԱՆ ԱՏԵՆԻՆ ՅԱՆՁԱՆՁԱՆԱՑ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆՑ ԲԱՏԱՒԻՈՅ, ԸՆԹԵՐՑԵԱԼ ԱՌԱՋԻ ՏԱՐԵԻՈՐ ԺՈՂՈՎՈՅ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂԻՈՅՍ ԳՈՒՄԱՐԵԱԼ Ի ԳԱՒԻԹ ՇԻՆՈՒԱԾՈՅ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԵԿԵՂԵՑՒՈՅ Ի 25ԵՐՈՐԴՈՒՄ ԱՊՐԻԼԻ ԱՄՍՈՅ 1892 ԱՄԻ։

Պատուելի պարոնայք,

Այս չորեքտասաներորդ անգամն է՝ որով ազգային վարչութիւն մեր՝ առաջի ձեր հանրական ժողովոյս, զիւր տարեւոր տեղեկագիր նկատմամբ ազգապատկան իրողութեանց եղելոց ընդ վարչութեամբ մերով յընթացս 1891 ամի։ Ցընթացս երեքամեայ պաշտօնավարութեան մեր թէև ամենայն ջան ի գործ եդաք ըստ կարելւոյն հաւասարակշռել զտուրս ընդ մուտս ուրոյն հաստատութեանց, այլ ստիպիմք յիշել զի չեղեւ մեզ այն հնարաւոր զի անակնկալ Նորոգութիւնք յետ և յառաջ ի կալուածս հաստատութեանց պատահեալ մեծամեծ ծախուց բանային զդրունս, և այսպէս ծախքն առաւելոյր քան զմուտս։ Արդիւնս երեքին ազգային հաստատութեանց տեղւոյս ըստ կարգադրութեան և ըստ տրամադրութեան Պատրիարքարանի կանոնաց՝ վարչութիւն մեր կարի խնայողաբար ծախեաց ի պէտս որոշեալ նպատակացն, և փափաքելի էր անշուշտ առաւել եւս ընդարձակել զասպարէզ մարդասէր գործողութեանց երեքին հաստատութեանց, այլ որպէս ի վերն յիշեցաք, նուազութիւն եկամտոյ՝ խոչ և խութ եղեն ձեռնարկութեան վարչութեանս։

Վարչութիւն Ատենին

Ցընթացս երեքամեայ պաշտօնավարութեան մեր, չմնացին ամենայն պաշտօնեայք շարունակ ի պաշտօնի, այլ երկուքն ի մէնջ հրաժարեցան ի պաշտօնէ, և մին եւս մահացաւ, և հետզհետէ եղեն ընտրութիւնք նոր պաշտօնատարաց, աջակցութեամբ որոց անթերի որքան կարեւոր յառաջ վարեցաք զպաշտօն մեր, և այժմ ըստ որում այսօր բոլորի երեքամեայ պայմանեալ ժամանակ պաշտօնավարութեան մեր, ըստ տրամադրութեան Պատրիարքարանի կանոնաց, սովաւ տամք զմեր հրաժարական ի պաշտօնէ և հրաւիրեմք զժողովդ ընտրել նոր պաշտօնեայս առ ի կազմել նոր ատեան վարչութեան։

Սուրբ Յովհաննու Եկեղեցին

Պատկանելի սոյն կրօնական հաստատութեանց որպէս գիտէք, կայ տուն մի յարքունի դաշտի։ Նկատմամբ սոյն տան գրաւոր առաջարկութիւն մի ընթերցաւ յանցեալում ամի ի հանրական ժողովի, աբարեալ ի Պ. Գ. Ե. Գասպարէ՝ այն է երկու տունս կառուցանել ի յետ կոյս նոյն մեծ տան, որեւ որոշմամբ ժողովոյն առկախ մնաց մինչ ցվերադարձ պարոնին յԵւրոպիոյ։ Վարչութիւն մեր երկու եօթնեկաւ յառաջ ընկալաւ թուղթ ի նմանէ որով յետ կոչէ զիւր առաջարկ ի մասին կառուցանելի տանցն։

Մ․ և Յ․ Ուսումնարան

Որպէս եւ տեսանի ի դրամական մասին սոյն հաստատութեան, յետ ծախելոյ զեկամուտ իւր վասն որոշեալ նպատակաց, մնայ գումար յաւելող նորին ի վերջ 1891 ամի․

Ֆրանք 3142.62

Սոյն հաստատութեան վերաբերեալ տուներն ի Գանգոլոտ փողոցի երկար միջոց մընայր առանց վարձու, վարչութիւն մեր տեսանելով զի ո՛չ ոք եղանէ վարձող, որչափ տունն յայն դրութեան մնայ, յետ խորհրդակցելոյ ընդ միմեանս, որոշեցաք սակաւ ինչ փոփոխութիւնս առնել դրութեան նոյն տան, ուստի և վերջաւորեցաք ընդ Չինացւոյ ճարտարապետի առնել զայն փոփոխութիւն 1500 գիլդրաւ, եւ յուսամք մինչ ցամավերջ աւարտեսցի և ի վարձու մտցէ այն տուն։ Երկոտասան չքաւոր մանկունք Ջուղայում արդեամբք սոյն հաստատութեան տակաւին կրթին ի Մ. Ճեմարանի հայոց ի Կալկաթա։ Ցընթացս ամառւոյն անցելոյ ոմանք ի դասուցն մեր շրջանաւարտ աշակերտաց ելեալ են անտի և ի տեղի նոցա այլ չքաւոր մանկունք են եդեալ, որք են բոլորքն գիշերօթիկք։

Ըստ թղթակցութեանց եղելոց ընդ մեզ և արգոյ կառավարչաց ճեմարանին, որոշեալ եմք պայմանեալ ժամանակ մնալոյ ի ճեմարանին իւրաքանչիւր մանկան իբր 5 ամ, և ո՛չ առաւել, զի մի երկար մընալով անդ արգել լիցին այլ չքաւոր մանկանց վայելելոյ զուսումն ի նոյն ճեմարանի։

Ցընթացս 1891 ամի ի պէտս ուսման մանկանց ի Կալկաթա առաքեալ եմք․

Ֆրանք 3042.78

Ցանցեալում ամի եւս առաքեցաք իբր նպաստ առ Կեդրոնական Դպրոցն Ջուղայու Ֆրանք 600 ի Մնացէ սոյն կրթական հաստատութեան։ Ուրախ եմք նկատել աստ զի նոր ընտիր Գեր․ Եսայի Եպիսկոպոսն ի ժամանել իւր ի վիճակ իւր մի ի կարեւորագոյն ձեռնարկութեանց իւր է եղեալ դարձուցանել զիւր ուշադրութիւն և ջան ի բարեկարգութիւն դնել սոյն ազգային դպրոց։

Միաբանութիւն Ջաւու

Սոյն պիտանի հաստատութիւն ուրախ եմք յիշել աստ յընթացս 1891 ամի գտանի ի բարւոք վիճակի ըստ դրամական մասին, զի յետ բաշխելոյ զտուրս յարդեանց լուրոց առ կարօտեալս, մնայ յաւելող նորին․

Ֆրանք 357.83

Սուրբ Պօղոս դպրոց Սանգիբարան գեղջ

Երեսուն ամօք յառաջ Ջուղայեցի հանգուցեալ պարոն Պօղոս Անդրէասեան կըտակաւ հրիտակեալ էր․ զի արդիւնք փոքրիկ կալուածոյ միոյ զետեղելոյ ի սահմանս Սամարանգայ ամի ամի առաքեսցի ի Ջուղա ի ձեռս Հոգաբարձուաց ի պէտս ծախուց դպրոցի միոյ կառուցանելի ի Սանգիբարան գեղջ։ Ի վախճանի նորա ի 1861 ամի գործադրեցաւ կամք հանգուցելոյն, և ամի ամի վարչութիւն մեր ստանալով զեկամուտ կալուածոյն, և որոշեալ գումար մի փոխանցելով ի Ջուղա ի պէտս ծախուց դպրոցի, մնացեալն վերածեալ է յետ և յառաջ ի 5 հատ Ջաւա բանք չէրս։ Եւ զի ըստ որում պայմանեալ ժամանակ հրիտակին լրացաւ յանցեալում ամի, հետեւաբար դադարի նոյն կալուածոյ եկամուտն։ Սոյն դպրոց պարտի կառավարել յետ այսու եկամտօք 5 հատ Ջաւա բանք չէրաց որ գնեալ է յանուն Սուրբ Պօղոս դպրոցի Սանգիբարանայ։

Ժառանգաւորաց դպրոց ի Ջուղա

Մի ի կարեւորագոյն պիտոյից ազգայնոցս մեր Պարսկաստանի և Հնդկաստանի է կազմութիւն սոյն դպրոցի։ Առ այս նպատակ հանգուցեալ պարոն Մ․ Որդանանեան հրիտակեալ է գումար, որ և վարչութիւն մեր ստանալով վերածեալ է յայն ի 7 հատ Ջաւա բանք չէրս, բայց սակաւութիւն եկամտոյ սորին ո՛չ թոյլ ետ ի ժամանակին ի կատար հանել զիղձ կտակողին։

Եկամուտ սոյն 7 հատ չէրաց լիցի առ ամի իբր Ֆրանք 100․ ազգայինք մեր աստ յորդորեալ ի գրութենէ Սրբազան առաջնորդին Ջուղայու, իղձ ցուցին, ձեռն տալ օգնականութեան ի կառուցումն սոյն պիտանի Հաստատութեան, ուստի և բուէարկեաց ի հանրական ժողովի նպաստել այնմ 400 գիլդրաւ ազամն ի Մնացէ Մ. Ս. Յ. Ուսումնարանի։ Սոյն որոշումն արդէն հաղորդեալ եմք գրութեամբ ի 5 փետրուարի առ Նորին բարձր Սրբազնութիւն Եսայի Եպիսկոպոս, և յուսամք ի մօտոյ կարդալ ի նմանէ զխորհուրդ նորին առ այս վախճան։

Վերջաւորելով զտեղեկագիրս, դնեմք ի ստորեւ զվիճակ նեւմտից ուրոյն Հաստատութեանց փակեալ ի 31 դեկտ. 1891 ամի։

Արդիւնք ծախք եւ դրամական վիճակ

Մուտք եկեղեցւոյ

Վարձ տանն արքունի դաշտի վասն 1891 ամի		2700.—
Հարկ վճարեալ Տէրութն.	180.—	
Վասն ապահովութն. հրկիզութեան	60.—	
Նորոգութեան եւ այլն	1063.77	
Գետնայարկ եկեղեցւոյ շինուածոյն	22.50	1326.27
Ջուտ եկամուտ զոյացեալ ի վարձու տանն		1373.73
Հանգանակութն. ի ժղվըդ		363.—
Մնացորդ համարոյ վաշխի		116.34
		1853.07
Թոշակ քահանայի եւ սպասաւորաց վարձ	2399.50	
Վասն պաշտօնէի ի հանգիստ հոգւոյ մի օրիորդի	10.—	
Մանր ծախք	31.20	
Ծախք համազգի օտարկնց.	27.50	2468.20
Առաւել ծախեալ քան զմուտն		615.13
Ստացուածք եկեղեցւոյն ի վերջ 1890 ամի էր		84,710.41
Ուստի ներկայ ունի		84,095.28

Հաստատութիւնք վերաբերեալ Ջուղայու

Ամենափրկչեան վանքն	19,260.—	
Դնմնկ.Ջուղու տնանկց.	20,173.—	
Կեդր. դպրոցն Ջուղայու	7,111.—	
Ամեն. տպրն.Ջուղայու	3,013.—	
Սուրբ Պօղոս դպրոցն Սանգիբարանայ	4,886.—	
Ս.Մինաս եկեղն.Ջուղ.	9,110.—	
Ս.Ստեփաննոս եկեղեցի	2,795.—	
Ս. Կատարինէ օրիորդաց Դպրոցն	5,500.—	
Հոգեւորական դպրոցն Ջուղայու	6,570.—	
Ս.Յովհաննու եկեղեցին Ջուղայու	5,580.—	
Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի	2,733.—	
Ս. Գէորգայ եկեղեցի Ջուղայու	911.—	87,642.—

Ապահովեալք որպէս ի ներքոյ

Մթերանոց վանուցն	13,000.—	
6 հատ Ջաւա Բանք չէր Վանուցն	5,400.—	
22 հատ Ջաւա Բան Ջուղայու տնանկաց	19,800.—	
10 հատ Ջաւա Բանք Ս. Մինաս եկեղեցի	9,000.—	
6 հատ Ջաւա Բանք վերաբերեալ օրդ.դպրոց.	5,400.—	
7 հատ Ջաւա Բանք Հոգեւորական դպրոցի	6,300.—	
3 հատ Ջաւա Բանք Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ	2,700.—	
7 հատ Ջաւա Բանք Կեդր. Դպրոց Ջուղայու	6,300.—	
3 հատ Ամենափրկչեան Տպարան	2,700.—	
5 հատ Ջաւա Բանք Ս. Պօղոս դպրոցն	4,500.—	
6 հատ Ջաւա Բանք Ս. Յովհաննու եկեղեցի	5,400.—	
3 հատ Ջաւա Բանք Ս. Գրիգոր եկեղեցի	2,700.—	
1 հատ Ջաւա Բանք Ս. Գէորգ եկեղեցի	900.—	84,100.—
Տարբերութն. յաւելող Ջուղայու հաստատութեան		3,542.—

Կշիռ մայրահաշուոյ Ս․ Յովակիմ եկեղեցւոյ փակեալ 31 դեկտ. 1891 ամի

Տունն արքունի դաշտի	52,000.—	
Շինուած եկեղ.	28,000.—	
Անօթեղէնք	2,000.—	
Կահ եւ կարասիք	500.—	
2 հատ ջաւա բանք չէրք	1,800.—	
Մ. եւ Յ. Ուսումնարան	922.34	
Սանդուղն	3,767.94	
Ջուղայու հաստ. գումարն	84,100.—	173,090.28

Պահանջք

Ստացուածք եկեղ.	84,095.28	
Դամծանակ գրաւոր աշխատանաց	1353.—	
Ջուղայու հաս. գումարն	87,642.—	173,090.28

Մ․ եւ Յ․ Ուսումնարան

Հաստատութեանս 4 կալուածոց մուտք		8875.—
Հարկ վճարեալ տէրութեան	748.50	
Ապահովագրութիւն հրկիզութեան	287.55	
Նորոգութեան	1039.—	
Մանր նորոգութեան	312.10	2387.15
Ջուտ եկամուտ կալուածոց		6487.85
Վաշխ դրամոց		1179.26
40 չէրաց դիվիդէնտ		660.—
		8327.11
Ծախք ուսման մանկանց ի Ջաւա	429.46	
Ծախք ուսման մանկանց ի Կալկաթա	3042.78	
Հանգանակութիւն առ կեդրոնական դպրոցն	600.—	
Համարակալութեան եւ ատենադպրութեան	600.—	
Հանգանակութիւն եւ այլն առ զանազան	512.25	5184.49

Ուսումն. Միաբանութիւն

Առաւելեալ քան զմուտն	3142.62
Կցելով ընդ մայր գումարոյ ստացուածոց	221,889.17
Ուստի ունի ներկայ	225,031.79
Սուրբ Յով. եկեղ. պարտք	922.34
	225,954.13

Ապահովեալ որպէս ի ներքոյ

Տունն տնաբանգայ	28,800.—	
Մթերանոցք ի Կայիպսար	122,200.—	
Տունն զանգոլոտայ	11,800.—	
Գրքատունն	400.—	
Տնեղէն	340.—	
Ջաւա բանք չէրք	36,000.—	
Մ. Մ. Բաբսեղի պարտք	2,500.—	
Գրաւական ի Սամարանգ	17,000.—	
Միաբանութիւն	741.60	
Գրաւ ի Բատաւիա	6,000.—	
Սանդուղն	172.53	225,954.13

Միաբանութիւն Ջաւու

Մթերանոցի վարձն վասն 1891 ամի		1200.—
Հարկ վճարեալ տէրութեան	88.50	
Ապահովութիւն հրկիզութեան	61.55	
Նորոգութիւնք	62.90	212.95
		987.05
Վաշխի մնացորդն		835.78
		1822.83
Նպաստ առ կարօտաւորս տեղւոյս	1405.—	
Նպաստ առ լրագիրս	60.—	1465.—
Առաւելեալ քան զծախսն կամ մուտն		357.83
Միաբանութիւն ունէր ի 1890 ամի		39,722.73
Մ. եւ Յ. Ուսումնարանի պարտք առ նա		741.60
		40,822.16

Ապահովեալ որպէս ի ներքոյ

Մթերանոցն	24,500.—	
Տնեղէն	50.—	
Գրաւական մի ի Բատաւիա	15,643.—	
Սանդուղն	629.16	40,822.16

Գ. ՏԷՐ Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ
Ատենադպիր կառավարիչ
Գ. ՏԷՐ ԳԱԼՍՏԱՆԵԱՆ Նախագահ
Ե. Գ. ՆԱՀԱՊԵՏ Գանձապետ
ՄԿ. Ր. ԱՂԱՆՈՒՐ Խորհրդական
Մ. Գ. ՆԱՀԱՊԵՏ Խորհրդական
Բատաւիա 25 ապրիլ 1892

ՐՈՊԼԱԳԻՐ ԺՈՂՈՎՈՅ

Հանրական տարեւոր ժողով
Բատաւիա—[illegible]

Ըստ յայտարարութեան շրջաբերականի կառավարչաց թուագրելոյ ի 25 մարտ 1892 ամի զտեղի կալաւ հանրական տարեւոր ժողով ի 25երորդում ապրիլի ամսոյ 1892 ամի յերեկոյեան ինն ժամու ի Սրահի ժամատան մեր, ուր ներկայ էին Սրբակրօն վիճակաւոր քահանայն մեր և Պարոնայք Գ. Ե. Գասպար, Մ. Յ. Պետրոս, Գ. Տէր Գալստան, Մ. Գ. Նահապետ, Պոլ Աղանուր, Ե. Գ. Նահապետ, Գ. Տէր Գ. Գասպարեան, Մ. Ջորջ, Գ. Մէլքում, Յ. Ն. Գալստան, Մ. Ն. Գալստան, Բ. Տէր Մինաս, Ց. Գ. Գասպար, Մ. Ա. Թադէոս։

Նախագահ Ատենին Պ. Գ. Տէր Գալստան կալաւ զաթոռ ժողովոյն։

Բացաւ ժողովն ընթերցմամբ տարեւոր տեղեկագրոյն մատուցեալ ի կառավարչաց՝ որով և տային զհամար ազգային գործառնութեանց իւրեանց յընթացս 1891 ամի։ Սոյն տեղեկագիր ընդունելի լեալ կալաւ զհաւանութիւն ժողովոյն։

Երկու պարոնայք Գ. Ե. Գասպար և Գ. Մէլքում ընտրեալք ի նախագահէն վերահասու լինելոյ ամենայն հաշուեմատենից երեքին ազգային հաստատութեանց, և յետ քննութեան գտեալ զբոլորն ուղիղ եւ ըստ կարգին, որպէս թուղթ նոցա ուղղեալ առ կառավարչութիւն ընթերցաւ ի լուր ժողովոյն։

Առաջարկութեամբ Պարոն Գ. Ե. Գասպարի երկրորդեալ ի Պ. Գ. Տէր Գալստանէ և մեծամասնութեամբ ժողովոյն որոշեցաւ զի ժողովուրդ Ջաւու հանգանակեսցէ զծախս ցաւակցական հեռագրին արարեալ առ Թագուհին Հոլանդիոյ, նոյնպէս և զծախս պըսակին որ եդեալ եղեւ ի վերայ դագաղի հանգուցեալ արքային Հոլանդիոյ յանուն հասարակութեան հայոց ի Ջաւա։

Ընթերցաւ թուղթ մի թուագրեալ ի 15 ապրիլի 1892 գրեալ առ Վարչութիւն մեր ի պատուելի հայ հասարակութեան Սուրաբայիոյ, որով և ընտրէին իւրեանց զընտրողս զքանի մի պարոնայս տեղւոյս առ ի տալ ի դիմաց իւրեանց քուէս ի սոյն ժողովի յընտրութիւն նոր պաշտօնատարաց։

Հուսկ ուրեմն եղեւ քուէարկութիւն յընտրութիւն նոր անդամոց վարչութեան և յետ զննելոյ ընտրեցան առաւելութեամբ քուէից կառավարիչք Ատենին Պարոնայք Մ. Գ. Նահապետ, Ե. Գ. Նահապետ, Գ. Տէր Գալստան, Գ. Տէր Գ. Գասպարեան, և Մ. Ն. Տէր Գալստան։

Փակեցաւ ժողովն շնորհակալութեամբ հանդերձ առ Պ. Նախագահն։

Ատենադպիր
Գ. ՏԷՐ ԳԱԼՍՏԱՆԵԱՆ

ՍԱՐԱ ՊԸՌՆԱՐ
ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ԱՅՑՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

ԵՕԹԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ
Ապրիլ 12էն մինչեւ 18 յաջորդաբար եօթը գիշեր
Ի ԹԱՏՐՈՆ ՎԷՐՏԻ, ՊԷՐԱ

Ապրիլ 12/24, երկուշաբթի․ Կամելիաւոր Տիկին (La Dame aux Camélias)
» 13/25, երեքշաբթի․ Թոսքա (Tosca)
» 14/26, չորեքշաբթի․ Ֆէտօրա (Fedora)
» 15/27, հինգշաբթի․ Ադրիէնն Լըքուվրէօր (Adrienne Lecouvreur)
» 16/28, ուրբաթ․ Դարբնոցատէրը (Le Maitre de Forges)
» 17/29, շաբաթ․ Ֆրանսիյօն (Francillon)
» 18/30, կիրակի․ Ֆրու-Ֆրու (Frou-Frou)

ԹԱՏՐՈՆԻՆ ԳԻՆԵՐԸ

Պէնեուարի օթեակները՝ 150 ֆրանք։ Պէլ-էթաժ՝ A. B. G. H. և թ. 9, 10, 11, 12, 14.—150 ֆրանք։

Պէլ-էթաժի մնացեալ օթեակները՝ 138 ֆրանք։ Երկրորդ կարգի օթեակներ՝ 69 ֆրանք։ Թիկնաթոռք՝ 25 ֆրանք։ Նստարանք՝ 15 ֆրանք։ Մուտք օթեկաց և Բաւուարի՝ 4 ֆր. 20 (մէկ մէճիտ)։

Տոմսակները կարելի է գնել այժմէն ամէն օր, Վէդաի թատրոնի կիշէէն։

ԼԱՆՕԼԻՆ
ՔՐԷՄ ՏԸ ԹՈՒԱԼԷԹ
ԼԱՆՕԼԻՆ

ԼԱՒԱԳՈՅՆ դարման ընդդէմ այրուածոց կեղեքուածներու։
ԳԵՐԱԶԱՆՑ մորթի պահպանման համար, մանաւանդ մանուկներու մասին, և գոյնի պահպանման։
ԼԱՒԱԳՈՅՆ դարման ընդդէմ մորթի հիւանդութեանց և ընդդէմ արիւներթութեանց։

Կը վաճառուի ամէն դեղարաններու եւ դեղօրէից ու անուշահոտութեանց մթերանոցներու մէջ։

Գործակալ եւ ներկայացուցիչ ի Կ. Պոլիս
Մ. Ս. ՖՐԷՕՑԼԻԽ
Կալաթա, Մերթէպանի փողոց, Գրնաճեան խան։ 398

ԴՐԱԳԻՐ մը կ'ուզուի, որ գիտնայ հայերէն եւ ֆրանսերէն, դիմել ի Մէհմէտ Փաշա խան, թիւ 18, ամէն օր 8էն վերջ։ 536 3—8

ՏՊԱՐԱՆ, ԿԻՍԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ
ԳՐԱՏՈՒՆ
Գ. ՊԱՊԱԶԵԱՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ցանկի է մեր բազմաթիւ յաճախորդաց եւ [illegible]

1/13 Փետրուար 1893
Կ. Պոլիս Սուլթան Համամ Ճատտէսի 14
Գ. ՊԱՊԱԶԵԱՆ

ՍՔՈԹԻ ՄՕՐՈՒԻ ՁԿ. Ի. ՕՇԱՐԱԿ

Կ. Պոլիս, 15 [illegible] 1889

Պարոնայք Սքոթ և Պօուն,

Յորմէ հետէ սկսած եմ գործածել ձեր Սքոթի Օշարակը, միշտ լաւ արդիւնքներ ունեցայ մանկանց խուլայի և անօրինութեան հիւանդութեանց քանի մը դէպքերու մէջ,

Իմ կարծիքս է թէ այս հաճոյ և յաջող պատրաստութիւնը միշտ Նախամեծար համարուելու է Ձկան իւղէն և կը յանձնարարեմ զայն,

ՏՐ․ Ա․ ԱՆՏՐԷԱՍԵԱՆ
Նախկին բժիշկ Օսմանեան բանակի

ՀԱԳՈՒՍՏԻ ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ
ՀԱՃԻ ՊԱՊԱ
Պահչէ Գափու, Լօմէր Էֆէնտի խան

Այս մթերանոց Եւրոպայէն իրեն յատուկ գործարանէն ամէն տարի եղանակին համաձայն նորաձեւ և աժան պատրաստ հագուստներ բերել կուտայ չափահաս մարդոց, պատանիներու և փոքր տղայոց համար։ Այս տարի եւս ձեւաւոր և լաւ կերպաւ պատրաստ հագուստներ բերել տուած է։ Սոյն մթերանոցը դիմողներն բոլոր առաջինէն ամէն կերպիւ գոհ պիտի մնան։ 505 23—26

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ [illegible]

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգլ. ոսկի 1.000,000

ՖԻՆԻՔՍ

Հիմնեալ ի Լոնտոն յամին 17[illegible]

ՖԻՆԻՔՍ հիմնեալ աւելի քան մի դար յառաջ, առաջին հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է, որոյ բաժնետէրք Անգլիոյ ամենահարուստ և հանրածանօթ դրամատէրեր են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 18.000.000 Անգլ. ոսկւոյ գումարն զոր մինչեւ ցարդ վճարած է հրդեհի վնասուց հատուցմանց. 34

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ [illegible] կալուածք, կարասիք և ապրանք յոյժ նպաստաւոր պայմանօք և [illegible] գործակալաց, որք ունին լիազօր իշխանութիւն [illegible] հատուցանելու կրած վնասներն։

Ա. ՍՈՒՍԱՆ և ԸՆԿ. ընդհ. գործակալք Կ. Պոլսոյ, Պէյրութի և Սեւ ծովու եզերաց Գալաթիա, Կամարջի փէմ, Քօմիսիոն խանի անկիւնը։

HAMBURG MUNICH UNITED

ՀԱՄՊՈՒՐԿ ԵՒ ՄԻՒՆԻԽ

ՄԻԱՑԵԱԼ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Դրամագլուխ Ֆրանք 8.000.000
Պահեստի դրամ ցվերջ յունիս 1890 » 6.465.860
Տարեկան հասոյթ » » » 14.135.925

Ընկերութիւնքս ՓՈԽԱԴԱՐՁ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ կ'ապահովագրեն [illegible] շինութիւններ և անոնց մէջ գտնուած կահկարասին և ապրանքներ խիստ չափաւոր սակագնօք։

Լիազօր ներկայացուցիչ Կ. Պոլսոյ

ՖՌԱՆՔՖՕՌԹՈՒԱԶ

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Դրամագլուխ Ֆրանք 6.250.000 Պահեստի դրամ Ֆրանք 4.270.300

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց վրայ բեռցուած վաճառքներ, ինչպէս նաև թղթատարական և փոխադրական ընկերութեանց յանձնուած ձեռագիր նիւթեր և դրամ պարունակող ծրարներ խիստ նպաստաւոր պայմանօք և սակագնօք։ Այն նիւթոց վրայ մեծաքանակ գումարներ կարենալ ապահովագրելու համար [illegible] միացած է նշանաւոր 13 լաւ ապահովագրական հաստատութեանց հետ, [illegible] և պահեստի դրամն է աւելի քան 100.000.000 Ֆրանք

Լիազօր ներկայացուցիչ [illegible]

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Պոլիս, Պահչէ-Գաբու, [illegible] խան. 12, 13, 14 369

«ՖՈՍՖԱԹԻՆ ՖԱԼԻԷՐ»ը ամենէն ախորժելի և ամենէն յանձնարարելի դեղն է տղայոց համար 6-7 ամսեայ տարիքէն սկսեալ, մանաւանդ կաթնահատութեան և աճման ատենը։ Կը դիւրացունէ ատամներու բուսնիլը, կ'ապահովէ ոսկրներու բարեկազմութիւնը։

Փարիզ, Վիքթորիա ծառուղին 6 և դեղարանները

[illegible] ԼՈՒԾԻՉ ԵՒ ԶՈՎԱՑՈՒՑԻՉ

ԽԻՍՏ ԱԽՈՐԺԱՀԱՄ

TAMAR INDIEN GRILLON

Ընդդէմ ՓՈՐՀԱՐՈՒԹԵԱՆ, [illegible], գլխացաւի, մաղձի, անախորժութեան, ստամոքսի և աղեաց անհանգստութեան.

Ստորագրութիւն տուփին վրայ դրուած

ՓԱՐԻԶ, ԿՐԻՅԼՈՆ, 33, Արշիվ փողոց դեղարանաց մէջ, 33, rue de Archives 120

VICHY

Վարչութիւն ՓԱՐԻԶ, 8, փողոց Մոնմարթր

PASTILLES DIGESTIVES.— Այս շաքարները Վիշիի մէջ պատրաստուած են Ջերմուկներէն ելած աղերով, ախորժական են և ազդու դարման մ'են դիւրամարսութեան դէմ։

SELS de VICHY pour BAINS.— Այն անձանց համար որք չեն կրնար Վիշի երթալ։

Կեղծէն զգուշանալու համար, սոյն դեղերու և շիշերու վրայ պահանջել ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ դրօշմը։

Անգլիական դեղարանն ու դեղավաճառանոցն ի Կ. Պոլիս, և ամէն դեղագործներուն քով։

ՖԷՐՆԷԹ-ՊՐԱՆԳԱ

Մասնաւոր բաղադրութիւն Միլանի Պրանգա եղբարց

Մատակարարք Իտալիոյ Արքայական Տան

Ոսկեայ շքադրամ՝ Բարիզի 1889ի Տիեզերական Արուեստահանդէսին մէջ.

Քսան տարուան յաջողութիւն Իտալիա, Ամերիկա, ի Հնդկաստան, յԱրեւելս և յԵգիպտոս.—Շքադրամ 1885ի Անվերսայի, 1884ի Թուրինի, 1883ի Նիսի, 1881ի Միլանի, 1888ի Մէլպուրնի և Պրուքսէլի. 1879ի Սիտնէյի, 1878ի Բարիզի, 1876ի Ֆիլատելֆիոյ, 1873ի Վիէննայի միջազգային ցուցահանդէսներուն մէջը։

ՖԷՐՆԷԹ-ՊՐԱՆԳԱ առողջապահական ամենէն ծանօթ ըմպելին է։—Շատ բժիշկներէ կը յանձնարարուի իբր զգուշական դարմանական ճահճային երկիրներու տենդերու, տարափոխիկ հիւանդութեանց և խոլերայի։

ՖԷՐՆԷԹ-ՊՐԱՆԳԱՆ կը դիւրացնէ մարսողութիւնը, կը հանդարտեցնէ ծարաւը, կը գրգռէ ախորժակը, կը բուժէ գլխու ցաւը, գլխու պտոյտը, ջղային ցաւն և մելամաղձութիւնը։

Այս ըմպելիք, բոլոր ծանօթ ըմպելիներէն և ամենէն գերազանց, կ'առնուի ամեն օր ճաշէն առաջ իբր ախորժաբեր։ Ճաշէն յետոյ, ազդու մարսողական է։ Կարելի է խառնել զայն վերմութի, գինիի, Սէլցի ջրոյ և խահուէի հետ։

ՖԷՐՆԷԹ-ՊՐԱՆԳԱՆ, ինչպէս և նոյն տան վերմութը, կը գտնուի գլխաւոր [illegible], նպարավաճառաց և գինեվաճառաց քով։

Թուրքիոյ համար կեդրոնատեղին է ՊՕՆՈՄԻ և ԲԷՔՔԻԱ 2218

ՌՈՒԷԱԼ ԷՔՍՉԷՆՃ

ԱՍՍԻՒՐԱՆՍ ՔՕՐՓՕՐԷՇԸՆ

ԱՄԵՆԷՆ ՀԻՆ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1720ԻՆ

Դրամագլուխ աւելի քան Անգլ. ոսկի 4.000.000
Այսչափ հրդեհի արկածից համար տուած է » 35.000.000

Ընկերութիւնը կ'ապահովագրէ քարաշէն և փայտաշէն ամեն տեսակ կալուածներ, կահ կարասիք և ապրանք։

[illegible]

Աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ փափաքողք կը հրաւիրուին դիմել առ Ընդհանուր գործակալս Ծ. Վ. ՍԻԻԹԱԼ ԵՒ ԸՆԿ. Պահճէ Գաբու, Մէյտանճըք փողոց, [illegible] խան. 140

[illegible]

Ն. ՓԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիայի և Պաթումի միջեւ [illegible]

«Մինկրէլի» շոգենաւը, ապրիլ 25ին Մարսիլիա պիտի ուղեւորի երեկուան ժամ 5ին։

Բարիզ-Լիոն-Մարսիլիա երկաթուղեաւ ուղեւորութիւնն ի միասին առնլով
Ա. կարգ 245 Ֆրանք
Բ. » 175 »

[illegible]

Դիմել առ գործակալս [illegible] 477



ՍԷՅՏԸԼ ՆԱՈՒՄԱՆ

ՏՐԷԶՏԱ

(Սաքսոնիա)

1400 գործաւորք տարին 80000 մեքենայ կը շինեն; Ընտանեաց համար ձեռքի մեքենաներ; Դերձակներու և կօշկակարներու համար ոտքով շարժող մեքենաներ; Կարի մեքենաներու ամենէն լաւ տեսակը

ԾԱՆՕԹ.—Սաքսոնիայի և Նաումանի [illegible] մեքենաներուն վրայ վերոյիշեալ մետայլները նկարուած են։

Թուրքիոյ ընդհանուր գործակալատար Մ. Ժ. ՄԵՐՃԱՆ Ց. Պոլիս, Պահչէ Քափու, Մէյտանճըք փողոց թիւ 54 և 56 489 12—26

EMULSION SCOTT

(ՍԳՈՏԻ ՕՇԱՐԱԿ)

ՄՈՐՈՒԻ ՁԿԱՆ ԶՈՒՏ ԻՒՂ

Հիփոֆոսֆիթ կրի և սոտայի

Պատրաստեալ ձեռամբ ՍԳՈՏԻ և ՊՕՈՒՆԻ ի Նիւ-Եորք։

Կաթին չափ ախորժահամ է

Մորթի ձկան հում իւղի բոլոր յատկութիւններէն զատ, հիփոֆոսֆիդներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ծղգածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։

Ընդհ. գործակալք ի Կ. Պոլիս, ՀԱՆՄԷՐ ԻՒ ՀԱՒՐԷ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

[illegible], Կ. Պոլսոյ և Օտեսայի մէջ

[illegible]

Անուանք	Թօնաժ	Անուանք	Թօնաժ	Անուանք	Թօնաժ
[illegible]	2000	[illegible]	1600	[illegible]	3200
[illegible]	3000	[illegible]	6500	[illegible]	1700
[illegible]	5500	[illegible]	3200	[illegible]	1500
[illegible]	2300	[illegible]	1400	[illegible]	1000
[illegible]	3000	[illegible]	1200	[illegible]	2800
[illegible]	3000	[illegible]	2000	[illegible]	4400
[illegible]	2200	[illegible]	3600	[illegible]	3200
[illegible]	2000	[illegible]	7000	[illegible]	3000
[illegible]	8800	[illegible]	1200	[illegible]	3500
[illegible]	2600	[illegible]	5000	[illegible]	3500
[illegible]	2500	[illegible]	3300	[illegible]	4000
[illegible]	2100	[illegible]	2000	[illegible]	8200
[illegible]	2000	[illegible]	4200	[illegible]	3000
[illegible]	3700	[illegible]	2200	[illegible]	2000
[illegible]	5000	[illegible]	2000	[illegible]	4300
[illegible]	3500	[illegible]	4500	[illegible]	3000
[illegible]	3400	[illegible]	3000	[illegible]	1200
[illegible]	2500	[illegible]	1500	[illegible]	2800
[illegible]	2500	[illegible]	4300	[illegible]	900
[illegible]	4800	[illegible]	6500	[illegible]	5000
[illegible]	2100	[illegible]	2000	[illegible]	5000
[illegible]	2600	[illegible]	3100	[illegible]	3600
[illegible]	3000	[illegible]	2000	[illegible]	1000
[illegible]	5200	[illegible]	3000	[illegible]	200
[illegible]	2600	[illegible]	5000	[illegible]	200
[illegible]	800	[illegible]	4500	[illegible]	140
[illegible]	700	[illegible]	2000	[illegible]	120
[illegible]					3000
[illegible]					8000
[illegible]					8100

[illegible]

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՈՒԻԾ
Գործակալք
Թիւ 17-18, Քիւչիւք Մէյտան խան Ղալաթիա
293

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվրբուլի և Միջերկրականի միջեւ բանող շոգենաւք

Անուանք	Թօնաժ	Անուանք	Թօնաժ
[illegible]	4200	[illegible]	3000
[illegible]	4000	[illegible]	3000
[illegible]	4000	[illegible]	3000
[illegible]	3350	[illegible]	3000
[illegible]	3250	[illegible]	800
[illegible]	3250	[illegible]	800
[illegible]	3250	[illegible]	70

«Բերա» շոգենաւը, ապրիլ դէպի 14ին (Հ. Տ.) Լիվրբուլէն աստ կ'սպասուի ընդհանուր վաճառքով։

Դիմել առ Ժ. Վ. ՎԻԹՕԼ և Ընկ.
Ուբիթօլ խան
ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ.
292 31, Ճէյմս Սթրիթ Լիվրբուլ

ՔԻՒՆԱՐՏ (CUNARD)

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՇՈԳԵՆԱՒՈՒՑ

Որ ամէն երկու շաբաթ կը բանի Լիվրբուլի և Սեւ-ծովու միջեւ

Անուանք	Թօնաժ	Անուանք	Թօնաժ
Ումպրիա	7718	Գադալոնիա	4845
Էթրուրիա	7718	Պոթնիա	4531
Սերվիա	7391	Սամարիա	2574
Աւրանիա	7268	Մարաթոն	2408
Բաւոնիա	5587	Աթլաս	2398
Սէֆալոնիա	5517	[illegible]	2168
Գալլիա	4809	Թարիֆա	2246
Սկիթիա	4557	Պալմիրա	2144
[illegible]	3148	[illegible]	899
[illegible]	1876	[illegible]	1855
Շէրպուրկ	1614		

Դիմել առ ԹՈՄԱՍ Ջ. ՃՈԼԻ գործակալս
Thomas C. Joly
Ալեքսանտրիա խան Թիւ 401
17 Ղալաթիա

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱՑ

ԳԻԾ Կ. ՊՈԼԻՍ—ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ—ՊԷԼԼՈՎԱ

Արեւ. ճեպն. Թ. 2 Եշ. Եշ. Ա.	Կուխ. ճ-մ. Թ. 4 Ամ. օր ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 62 Ամ. օր ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 132 Եշ. Եշ. ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 124 ԱԲԳ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխ. խառն Թ. 123 ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 131 ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 61 Ամ. օր ԱԲԳ	Կուխ. ճեպ. Թ. 7 Ամ. օր ԱԲԳ	Արեւ. ճեպն. Թ. 1 Ա.
ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.		ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
7 20	8 13	6 30			Մկ. Կ. ՊՈԼԻՍ ժմ.			8 32	8 22	4 00
		6 41			Գումգաբու			8 23		
		6 53			Եէտի-գուլէ			8 07		
		7 12			Մագրիգիւղ			7 44		
		7 26			Այաստեֆանոս			7 22		
		7 45			Քիւչիւք—Չէքմէճէ			7 07		
		8 29			Սբարթա—գուլէ			6 22		
	9 53	9 05			Հատըմքէօյ			5 56	6 58	
		9 45			Չաթալճա			4 53	6 17	1 50
9 58	10 51	10 25			Գապագճէ			4 20		
		11 27			Սինէքլի			3 29		
	12 12	12 09			ժմ. Չէրքէզքէօյ մեկնում			2 37	4 38	12 09
	12 14	12 40			մկ. ժամանում			2 12	4 33	12 04
12 04	12 56	1 41			Չօրլու			1 26	3 56	
		2 33			Մուրաթլը—Քէօրքէօյ			12 26		
		3 05			Սէյիտլէր—Չիֆթլիք			11 53		
	2 25	3 44			Լիւլէ—Պուրկազ			11 16	2 26	
2 05	2 53	4 30			Պապա—Էսքի			10 39	2 00	9 33
		5 13			Բավլօ—քէօյ			9 40		
	3 58	6 03			Ուզուն—Քէօփրիւ			8 56		
	4 16	6 47			Գուլէլի—Պուրկազ			7 46	12 50	
		7 12			Ուրլի			7 14	12 31	8 05
4 21	5 09	7 59			ժմ. ԱԴՐ. ՊՈԼԻՍ մկ.			6 25	11 37	7 14
4 29	5 19		3 15		մկ. ժմ.		1 25		11 22	7 09
			4 07		Գառաղաչ		12 32			
5 25	6 12		4 57		ժմ. Մուսթաֆա փաշա մկ.		11 39		10 27	6 12
5 31	6 32		5 17		մկ. ժմ.		11 19		10 02	6 07
6 14	7 13		6 38		ժմ. Հարմանլը մկ.		9 54		9 19	5 23
6 20	7 38		6 53		մկ. ժմ.		8 48		8 59	5 18
	8 01		7 58		ժմ. Թըրնովա—Սէյմէնլի մկ.		8 01		8 33	4 53
	8 11			10 50	մկ. ժմ.				8 23	4 48
	8 47			11 50	Գայաճըք—Հասքէօյ	12 50			7 52	
	9 34			1 07	Եէնի—Մահալլէ	12 06			7 05	
8 38	9 59			1 49	Պաշաքլը	10 50			6 39	3 06
	10 25			2 24	Գաթունիցա—Սթանիմագ	9 58			6 44	
9 23	10 44			2 49	ժմ. Ֆիլիպէ մկ.	9 04			5 54	2 17
9 33	11 04			3 20	մկ. ժմ.	8 25			5 34	2 12
	11 56			4 41	Թաթար Բազարճըք մկ.	7 51			4 43	
	12 22			5 12	ժմ. Սարամպէյ մկ.	6 45			4 17	
	12 23				մկ. ժմ.	6 00			4 16	
11 10	12 44				ժմ. Պելովա մկ.				4 04	12 44
3 20	4 29				Սոֆիա				12 34	[illegible]
2 10	9 50				Նիշ				5 51	9 20
8 45	4 48				Պելկրատ				[illegible]	[illegible]
9 40	1 20				Պուտափեշթ				[illegible]	
3 16	7 20				Վիեննա մկ.				8 30	

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Ստորագծեալ վայրկեանները կը ցուցնեն երեկուան ժամը 6էն և առաւօտեան ժամը 5.59ի միջեւ եղած գիշերուան ժամանակը։

2.—Կ. Պոլսոյ արուարձանաց ժամանակացոյցը մասնաւոր ցուցակ մ'ըն է եղած։

3.—Ձախակողմի սիւնակաց մէջ կառախմբոց մեկնման ժամանակը պէտք է կարդալ վերէն վար և աջակողմի սիւնակաց մէջ վարէն վեր։

4.—Թիւ 331 «խառն կառախումբը» ի Թրնովա—Սէյմէնլի կը հաղորդակցի 7 թիւ «պայմանագրական կառախմբին» հետ։

5.—Թիւ 322 «խառն կառախումբը» ի Թրնովա—Սէյմէնլի կը հաղորդակցի Թիւ 4 «պայմանագրական կառախմբին» և Թիւ 131 «խառն կառախմբին» հետ։

6.—Թիւ 621 խառն կառախումբը Ուսքիւպի մէջ կը հաղորդակցի՝ Զիպէֆչէ գացող Թիւ 522 եւ Սելանիկ գացող Թիւ 513 խառն կառախմբոց հետ։

7.—Մահճաբարձ վակոն մը աւելցուած է Թիւ 7 և 4 պայմանագրական կառախմբոց, արեւելեան ճեպընթացին չբանած օրերն, այսինքն.

Կ. Պոլսէն մեկնող Թիւ 4 կառախմբին) Կիրակի, երեքշաբթի, չորեքշաբթի ուրբաթ և շաբաթ օրերը

Պելովայէն մեկնող Թիւ 7 կառախմբին) Կիրակի, երկուշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը

Ուղեւորք կրնան զայն ի կիր առնուլ յաւելուածական սակ մը վճարելով.

Ա. կարգ	Բ. կարգ	
Ֆր. 10.—	Ֆր. 7.—	Կ. Պոլսէն Ադր. Պոլսոյ համար կամ փոխադարձաբար
„ 12.—	„ 9.—	Կ. Պոլիս Ֆիլիպէ Պելովայի համար կամ փոխադարձաբար

8.—Արեւելեան Եւրոպայի ժամանակը [Ա. Ե. Ժ.] 4 վայրկեան առաջ է Կ. Պոլսոյ տեղական ժամուն վրայ։

9.—Միջին Եւրոպայի ժամանակը [Մ. Ե. Ժ.] 32 վայրկեան ետք է Սելանիկի ժամուն վրայ։

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ԳԻԾ ՍԷԼԱՆԻԿ—ՈՒՍՔԻՒՊ—ԶԻՊԷՖՉԷ

Կուխմ. խառն Թ. 512 ամեն օր ժ. վ.	Կուխմ. խառն Թիւ 522 ամեն օր ժ. վ.	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխմ. խառն Թիւ 523 ամեն օր ժ. վ.	Կուխմ. խառն Թիւ [illegible] ամեն օր ժ. վ.
5 10		Սէլանիկ (Պիւ. Փ.) ... մկ.		10 15
5 44		Թօփսին		9 41
6 21		[illegible]		9 04
[illegible]		Գարասուլու		8 41
6 53		Կիւմէնճէ		8 51
7 31		Կէօրկէլի		7 59
8 05		Միրօվչէ		7 15
[illegible]		[illegible]		7 06
8 47		ժմ. Դէմիր-գաբու (Պիւ. Փ.)		6 52
[illegible]		մկ.		6 17
9 42		Գրիվօլագ		5 43
10 21		Վէլէս—[illegible]		5 00
11 08		ժմ. Քէօփրիւլիւ		4 10
11 18		մկ.		4 00
12 06		Զէլէնիկօ		3 17
12 12		[illegible]		2 41
	1 06	ժամ. ՈՒՍՔԻՒՊ (Պիւ. Փէ)		
	1 47	մեկ.		
	2 42	Ըճաալար	2 20	
	3 15	Գումանօվա	1 44	
	3 43	Թապանօվչէ	1 07	
	3 56	Պրէշովա	12 29	
	4 21	[illegible]	12 04	
	4 34	[illegible]	11 46	
		Զիպէֆչէ	11 16	
			11 00	
	9 55	Նիշ	[illegible]	
	[illegible]	Պելկրատ	[illegible]	
	1 20	Պուտափեշթ	2 40	
		Վիեննա մկ.	8 50	

ԳԻԾ ՈՒՍՔԻՒՊ—ՄԻԹՐՕՎԻՑԱ

Կախմ. խառն Թիւ 622 Եշ. Դշ. Ուր. ժ. վ.	ԿԱՅԱՐԱՆՔ	Կախմ. խառն Թիւ 621 Եշ. Եշ. Շբ. ժ. վ.
7 15	Ուսքիւպ (Պիւ. Փէ) ժամ	12 29
8 22	Եէչիլի ... մեկ.	11 36
9 17	Քաչանիք	10 59
10 27	Վերիզօվիչ	10 12
11 20	Լիփլեան	9 11
12 13	Փրիշթինա	8 16
12 58	Վուչիթրան	7 22
1 15	Միթրօվիցա մկ.	7 00

ԹԸՐՆՕՎԱ—ՍԷՅՄԷՆԼԻ—ԵԱՄՊՕԼՈՒ

Կուխ. խառն Թ. 321 Եշ. Եշ. ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 323 Կիր. ԱԲԳ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխ. խառն Թ. 322 Դշ. Ուր. ԱԲԳ	Կուխ. խառն Թ. 324 Եշ. ԱԲԳ
9 13	1 40	մկ. Թրնվ-Սէյմէնլի ժմ.	7 20	9 4[illegible]
9 58	2 25	Գարաբունար	6 46	9 15
11 05	3 32	Իանէ—Մէհլէսի	5 48	8 14
12 13	4 43	Եէնի—Զաղրա	4 42	7 09
1 11	5 41	Սլիվնօ—Քրմանլը	3 41	6 13
2 00	6 50	Եամպօլու ժմ.	2 40	5 10
6 58		ժմ. Պուրկազ մկ.	9 40	

ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ—ՏԷՏԷ ԱՂԱՃ

Կուխ. խառն Թ. 221 Եշ. Դշ. և Ուր. ԱԲԳ	ԿԱՅԱՐԱՆՔ	Կուխ. խառն Թ. 222 Դշ. Եշ. և Շբ. ԱԲԳ
7 51	մկ. Ա. Պոլիս ... ժամ.	6 53
8 47	Ուրլի	5 58
9 33	Գուլէլի — Պուրկազ	5 30
10 10	Տիմէթօքա	4 38
11 22	Սուֆլի	3 3[illegible]
12 20	[illegible]	2 31
1 21	Ֆէրրէ	[illegible]29
2 22	ժմ. Տէտէ—Աղաճ մկ.	12 20

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ